2017, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (478)

Բրիտանյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
Բուլղարիայի Հանրապետության նորանշանակ դեսպանին

Հունվարի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բուլղարիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիա Պավլովա Ցոցորկովա-Կայմակչիեւային:

Ողջունելով դեսպանին՝ Նորին Սրբությունը փաստեց, որ հաճելի է հայ ժողովրդի հոգեւոր նվիրական կենտրոնում Բուլղարիայի Հանրապետության նորանշանակ դեսպանին ընդունելը: Վեհափառ Հայրապետը հավելեց, որ դեռեւս միջնադարից սկսյալ՝ հայ եւ բուլղար ժողովուրդները մշտապես ունեցել են ջերմ, բարեկամական եւ գործակցային հարաբերություններ:

Այնուհետեւ խոսք ասաց նորանշանակ դեսպանը: Տիկին Մարիա Պավլովա Ցոցորկովա-Կայմակչիեւան անդրադարձավ Բուլղարիայում հայ համայնքի կյանքին, հայորդիների ակտիվ ներգրավվածությանը երկրի հասարակական, քաղաքական եւ մշակութային կյանքում: Դեսպանն ընդգծեց, որ հայ համայնքը յուրօրինակ կապող կամուրջ է Հայաստանի եւ Բուլղարիայի միջեւ: Վերջինս վստահեցրեց, որ իր պաշտոնավարման ընթացքում պիտի անի ամենը՝ նպաստելու երկու երկրների գործակցության եւ փոխհարաբերությունների առավել զորացմանը:

Այս կապակցությամբ Նորին Սրբությունը գոհունակությամբ շեշտեց, որ բուլղարական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ Բուլղարիայի տարբեր քաղաքներում ձեւավորված հայկական համայնքները շարունակում են ապրել իրենց ազգային եւ հոգեւոր կյանքով: Հայոց Հովվապետն ի մասնավորի ընդգծեց, որ այդ հոգածությունը հայ ժողովրդի զավակների՝ Բուլղարիայի կյանքում ունեցած ազնիվ վաստակի գնահատանքն է:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերհիշեց իր հովվապետական այցը Բուլղարիա, անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ Բուլղար Ուղղափառ Եկեղեցու եղբայրական հարաբերություններին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն առ Աստված աղոթքով դեսպանին մաղթեց բարի առաքելություն եւ արդյունավետ ծառայություն:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի պաշտոնեությանը

Հունվարի 13-ին՝ Տեր Հիսուս Քրիստոսի անվանակոչության տոնին, Մայր տաճարում մատուցված սբ Պատարագի ավարտին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դահլիճում ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեությանը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանի:

Բացման խոսքում Մուշեղ սրբազանը Մայր Աթոռի պաշտոնեության անունից շնորհավորեց Նորին Սրբությանը՝ բերկրալի տոների առիթով եւ Հայոց Հորը փոխանցեց ամենքի սերն ու նվիրումը:

Սուրբ Էջմիածնի աշխատակիցների անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորական խոսք ուղղեց նաեւ Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի գլխավոր խմբագիր, փիլ. գիտ. դոկտոր Արսեն Բոբոխյանը՝ շնորհակալություն հայտնելով հայրական խնամքի եւ հոգածության համար:

«Անցած 2016 թ. հարուստ էր ձեռքբերումներով, բայց, դժբախտաբար, նաեւ կորուստներով: Չնայած բազմաթիվ խոչընդոտներին՝ պատերազմի եւ խաղաղության սահմանագծին գտնվող մեր երկիրը, այնուամենայնիվ, զարգացման լուրջ քայլեր կատարեց, եւ այս գործընթացում խիստ էական էր Հայ Առաքելական Եկեղեցու դերը, որն իր անմիջական մասնակցությունը բերեց հայրենիքում եւ Սփյուռքում տեղի ունեցող գրեթե բոլոր իրադարձություններին:

2016 թ. սեպտեմբերին լրացավ Հայոց պետականության քառորդ դարը: Մի հին ժողովուրդ, որի անունը հիշվում է դեռեւս սեպագրերում՝ վաղուց վերացած քաղաքակիրթ ազգերի շարքում, այսօր, զառամյալ ծերունու փոխարեն, հառնում է որպես 25-ամյա մի երիտասարդ, որի հոգեւոր առաջնորդությունը վստահված է Ձերդ Սրբությանը: Ձեզ վիճակվեց հովվապետել մեր ժողովրդին պատմական այն ժամանակաշրջանում, երբ մի կողմից թշնամու անընդմեջ հարձակումների, մյուս կողմից՝ երկրի սոցիալական ծանր վիճակի պայմաններում տքնում էր հազարամյա հայ ժողովուրդը:

Խոսելով նախորդ տարվա մասին՝ չենք կարող չանդրադառնալ ապրիլյան Քառօրյա պատերազմին, որից մեր ժողովուրդը հերթական անգամ պատվով դուրս եկավ: Այդ դժվարին օրերին Հայոց Ս. Եկեղեցին եւ Դուք, Վեհափա՛ռ Տեր, հայ զինվորի եւ ժողովրդի կողքին էիք:

...2016 թ. տեղի ունեցած իրադարձություններից բոլորը հնարավոր չէ թվել:

Հայոց կյանքում տեղի ունեցած իրադարձությունների այս առատությունն ու Հայ Առաքելական Եկեղեցու՝ դրանցում խաղացած կարեւոր դերն ու նշանակությունը փաստում են մեր Եկեղեցու կենսունակության բարձր աստիճանը»,- նշեց պրն Բոբոխյանը՝ մաղթելով, որ Վեհափառի օրհնությամբ ավելի բարեհաջող լինի 2017 թվականը՝ խաղաղ, ներդաշնակ եւ զերծ հոգեւոր ու նյութական անհանգստություններից:

Ապա Ամանորի եւ Ս. Ծննդյան տոների առիթով ներկաներին շնորհավորեց եւ իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ փառք վերառաքելով առ Աստված՝ անցած տարում Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ ընդհանրապես Հայ Եկեղեցու առաքելության արգասավորման համար:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ներկաներին 2016 թվականին Եկեղեցու գործունեության կազմակերպման եւ անխափան ընթացքի համար ներդրած ջանքերի ու նվիրյալ ծառայության համար: Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ յուրաքանչյուր կառույց եւ աշխատակից խղճի մտոք, պատասխանատվության զգացումով, հանձնառությամբ ու սիրով կարելին արեցին եւ նպաստեցին, որպեսզի արդյունավոր լինի ժողովրդին ու հայրենիքին բերած Եկեղեցու ծառայությունը:

Գարեգին Բ Կաթողիկոսը հորդորեց նույն ոգով ու նախանձախնդրությամբ շարունակել իրենց բարեխիղճ ծառայությունը նաեւ 2017 թվականին, այն գիտակցությամբ, որ դրանով է պայմանավորված Եկեղեցու առաքելությունը, եկեղեցական կյանքում ծրագրվող ձեռնարկների հաջողությունը, ավելի ընդարձակ տեսլականը՝ խաղաղությունը երկրի սահմաններում եւ բարօրությունը հայ ժողովրդի կյանքում:

Կարեւորելով ամենքի ծառայությունը նաեւ հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում՝ Նորին Սրբությունը հավելեց. *«Վստահեցնում եմ ձեզ, որ յուրաքանչյուրիդ աշխատանքը մեծ, հսկայական ներդրում է մեր երկրի առաջընթացի ու խաղաղության, մեր ժողովրդի ապահով կյանքի ու ձեռքբերումների համար: Յուրաքանչյուրիդ անձնական ներդրումն ու ծառայությունը կարեւոր նպաստ են այն իղձերի, երազների եւ տեսիլքների իրագործմանը, ինչին ձգտում է մեր ժողովուրդը: Եթե յուրաքանչյուրս մեր ծառայության մեջ անսակարկ նվիրումով մեր պարտականությունն իրագործենք, կունենանք մեր ցանկալի երկիրը»*:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց Մայր Աթոռի աշխատակիցներին՝ նրանց ընտանիքներին մաղթելով օրհնյալ եւ բարեբեր տարի:

Շքանշանի հանձնման արարողություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Հունվարի 15-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում մատուցվեց Պատարագ, որի ընթացքում տեղի ունեցավ նաեւ շքանշանի հանձնում:

Նորին Սրբությունը Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան հանձնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Փառեն արք. Ավետիքյանին՝ բարձրորեն գնահատելով Հայ Եկեղեցու անդաստանում նրա վաստակը եւ տարիների ծառայությունը:

Օրվա խորհրդի շուրջ պատարագչի մատուցած քարոզից հետո, «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո, Մայր Աթոռի լուսարարապետ Հովսան եպս Հակոբյանը ս. Խորան բարձրացրեց հայրապետական սրբատառ կոնդակը:

Կոնդակում, որն ընթերցեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը, ի մասնավորի նշված էր. *«Սիրելի՛ Սրբազան, ուրախություն է Մեզ համար հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները բերել Ձեզ՝ Առաքելական մեր Սբ Եկեղեցու վաստակաշատ սպասավորիդ:*

Այսօր ուրախ առիթն ունենք գնահատանքով անդրադառնալու Առաքելական մեր Սբ Եկեղեցու անդաստանում Ձեր նվիրյալ սպասավորությանը: Անթիլիասի դպրեվանքում եւ ապա Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում ավարտելով Ձեր հոգեւոր ուսումնառությունը՝ Դուք ազգին ու Եկեղեցուն անձնվեր ծառայանվիրումի ուխտ կնքեցիք Տիրոջ Սուրբ Սեղանի առջեւ եւ ստանձնեցիք կուսակրոն հոգեւորականի առաքելությունը հավատավոր մեր ժողովրդի կյանքում:

Ձեզ պատասխանատու ծառայություն վստահվեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում, այնուհետեւ Աստուծո կամքը հովվական սպասավորության կոչվեցիք ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմում՝ երկար տարիներ աննվազ նախանձախնդրությամբ հոգեւոր սնունդ ջամբելով մեր ժողովրդի հավատավոր զավակներին: Ձեր առաքելության մեջ կարեւոր հանգրվան դարձավ սպասավորությունը Դիթրոյթի համայնքում: Հովվական անխոնջ նվիրումով Դուք Եկեղեցու շուրջ միավորեցիք բարեպաշտ հայորդիներին եւ բարի գործերով ու նախաձեռնություններով շինություն ու պայծառություն հավելեցիք տիրախնամ համայնքին: Դիթրոյթի Ծուխի պատմության մեջ կարեւորագույն ձեռքբերումներից է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից «Ալեք Մանուկյան» թանգարանը, որ հիմնեցիք Դուք Ձեր պաշտոնավարման տարիներին՝ թանգարանին նվիրելով նաեւ բազմաթիվ նմուշներ Ձեր անձնական հավաքածուից:

Սփյուռքում քահանայագործության երկար տարիների վաստակը Ձեր ուսերին եկաք Հայրենիք, Ձեր կարողությունները ի սպաս բերելու հայրենաբնակ մեր ժողովրդի հոգեւոր կյանքի նորոգությանը եւ մեր հոգեւոր ծննդավայրի՝ Սբ Էջմիածնի հավետ պայծառությանը: Այսօր Մենք ուրախ ենք հաստատելու, որ ինչպես Շիրակի թեմում, այնպես եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում ծառայեցիք անձնվիրումով ու Ձեր պարտականությանց հանդեպ առավելագույն բծախնդրությամբ:

Քրիստոսի հավատարիմ սպասավորիդ կյանքը զարդարված է նաեւ բարեսիրական գործունեությամբ, որ իրագործում եք ինքնաբուխ հանձնառությամբ եւ Ձեզ հատուկ համեստությամբ: Ձեր անձնական խնայողությունները Դուք ծառայեցնում եք մեր Սբ Եկեղեցու պայծառությանը, նաեւ Ձեր օրինակով խրախուսում եք բազմաթիվ հայորդիների՝ իրենց վաստակը ի սպաս բերելու ազգօգուտ ու եկեղեցաշեն ծրագրերի իրականացմանը: Հատկապես գովելի է Ձեր աջակցությունը ծնողական հոգատարությունից զրկված մանուկներին, ովքեր Ձեր օգնությամբ հաղթահարում են կյանքի դժվարությունները, զորանում հավատքով ու լավատեսությամբ...»:

Ապա Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Փառեն սրբազանին շնորհեց Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանը:

Ի Տեր ննջեց
Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը



Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյան

Խոր ցավով տեղեկացնում ենք, որ հունվարի 14-ի երեկոյան, կյանքի 85-րդ տարում, Ավստրիայում վախճանվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրյալ սպասավոր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը:

Բազմավաստակ Մեսրոպ սրբազանի վախճանը մեծ կորուստ է Հայոց Եկեղեցու համար:

Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռի ողջ միաբանությունը սգում են հոգելույս Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի մահը եւ աղոթում նրա հոգու հանգստության համար:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը (ավազանի անունը՝ Գեւորգ) ծնվել է 1932 թ. հոկտեմբերի 25-ին Սիրիայի Հալեպ քաղաքում:

1939-46 թթ. նախնական կրթությունն ստացել է տեղի Հայկազյան հայկական վարժարանում:

1946-47 թթ. սովորել է Հալեպի Բեթել վարժարանում:

1947 թ.՝ վարժարանն ավարտելուց հետո, ընդունվել է Անթիլիասի դպրեվանք: 1952 թ. ձեռնադրվել է սարկավագ:

Նույն թվականին Ստեփանոս արք. Սյունեցու մասին գրել է համապարփակ մի ուսումնասիրություն, որը հրատարակվել է 1958 թ. Բեյրութում: 1953 թ. ավարտել է դպրեվանքը եւ ձեռնադրվել կուսակրոն քահանա՝ ստանալով Մեսրոպ անունը:

1953-1956 թթ. դպրեվանքում դասավանդել է Հայոց պատմություն, գրաբար եւ մատենագրություն, միաժամանակ պաշտոնավարել է որպես գրադարանի փոխտնօրեն, ձեռագրատան գլխավոր պատասխանատու եւ տպարանի տեսուչ:

1956 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Կիլիկիո կաթողիկոսության՝ Անթիլիասի ձեռագրերի ընդարձակ նկարագրությունները» թեմայով, եւ Աստվածածնի վերափոխման տոնին ստացել վարդապետական աստիճան: 1956-57 թթ., 10 այլ միաբանների հետ կողմնորոշվելով ի նպաստ Ամենայն Հայոց Կաթողիկոսության, եղել է Անկախ միաբանության դպրեվանքի տեսուչ: Տեսչության ընթացքում ուսանողների հետ Բիքվայայից հեռացվել է, ապա հաստատվել Բեյթ Մերի գյուղում՝ հայ ազգայինների հովանավորությամբ մեկ տարի եւս շարունակելով դպրեվանքի տեսչությունը: 1957-58 թթ. Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանում դասավանդել է կրոն, գրաբար եւ մատենագրություն, միաժամանակ հովվություն արել:

1957-58 թթ. «Սփյուռք» շաբաթաթերթի հիմնադիրներից եւ հրատարակիչներից է եղել: 1959 թ. Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամի մրցանակ-կրթաթոշակով մեկնել է Անգլիայի Դարհիմ (Durham) համալսարան՝ հետեւելու արեւելագիտության եւ աստվածաբանության դասընթացներին:1959 թ. ամռանը մեկնել է Վիեննա, ծանոթացել հայ համայնքին, այնուհետեւ՝ 1959-61 թթ. ուսման տարիներին, եղել է Վիեննայի այցելու հոգեւոր հովիվ:

1961 թ. ավարտել է համալսարանի արեւելագիտության բաժինը եւ սկսել աշխատանքը «Հայ ժողովրդի մասնակցությունն Օսմանյան հանրային կյանքին Արեւելյան Անատոլիայի եւ Սիրիայի մեջ 1860-1908 թթ.» դոկտորական թեզի վրա:

1962 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակվել է Վիեննայի հոգեւոր հովիվ:

1964 թ. ստացել է արեւելագիտության դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականին կազմակերպել է Վիեննայի Ս. Հռիփսիմե եկեղեցու հիմնօրհնեքը:

1964 թ. սրբազանն ակտիվորեն գործակցել է կարդինալ Ֆրանց Կյոնիգի կողմից հիմնադրված «Պրո Օրիենտե» կազմակերպության հետ: Նույն թվականին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան:

1964-74 թթ. եղել է Մայր Աթոռի պաշտոնական ներկայացուցիչը Եկեղեցիների համաշխարհային խորհրդում:

1964-78 թթ. միաժամանակ հովվել է Հունաստանի հայ համայնքին:

1969 թ. պաշտոնապես նշանակվել է «Պրո Օրիենտեի» աստվածաբանական խորհրդատու եւ Մայր Աթոռի ներկայացուցիչ: 1970 թ. «Պրո Օրիենտեի» խորհրդատվական մարմնի հետ կազմակերպել է Հին Արեւելյան Ուղղափառ եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ անպաշտոն երկխոսություն:1979 թ. սրբազան հայրը նշանակվել եւ 1980 թ. հայրապետական կոնդակով հաստատվել է որպես Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակ:1980 թ. Վազգեն Ա Հայրապետի կողմից նշանակվել է Հայ Եկեղեցու կանոնադրության մշակման հանձնախմբի անդամ:1986 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս:

1992 թ. 60-ամյակի առթիվ ստացել է արքության պատիվ:

2002 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 70-ամյակի առթիվ պարգեւատրվել է Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով: 2003 թ. քահանայական ձեռնադրության 50-ամյակի առթիվ պարգեւատրվել է Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով: 1981 թվականից Վիեննայի համալսարանի բյուզանդագիտության բաժնում դասավանդել է հայ ժողովրդի քաղաքական պատմություն եւ գրաբար, դասախոսություններ կարդացել «Հայ միջնադարյան մատենագրություն», «Քրիստոսաբանական վեճեր Բյուզանդական կայսրության մեջ» թեմաներով: 1986 թ. Վիեննայի համալսարանը նրան շնորհել է պրոֆեսորի կոչում: Հեղինակ է մի շարք գրքերի, առանձին ուսումնասիրությունների եւ հոդվածների («Ստեփանոս արքեպիսկոպոս Սյունեցի» ուսումնասիրությունը, «Հայ ժողովրդի մասնակցությունն Օսմանյան հանրային կյանքին Արեւելյան Անատոլիայի եւ Սիրիայի մեջ 1860-1908 թթ.» դոկտորական աշխատանքը, գերմաներենով «Ֆրանց Վերֆել եւ Կոմիտաս» գիրքը եւ «Հայ Եկեղեցին» ուսումնասիրությունը, «Հրատարակիչ Վանանդեցիները» եւ «Սեբեոս պատմիչի գրքի վերականգնման մասին» ուսումնասիրությունները, կրոնի դասագիրքը՝ 6 հատորով):

ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

«Տիրոջ արդարությունն ուղիղ է եւ զվարճացնում է սրտերը.
Տիրոջ պատվիրանները լույս են ու լույս են տալիս աչքերին:
Տիրոջ երկյուղը սուրբ է եւ սուրբ է մնում հավիտյան:
Տիրոջ դատաստանները ճշմարիտ են եւ ինքնին՝ արդար»:
Սաղմ. ԺԸ 9-10

Արդարացնել նշանակում է ճշմարտությունը բացահայտել, որեւէ մեկին անմեղ ճանաչել, արդարությունը վերականգնել: Արդարացմանը եւ դրա հետ կապված խնդիրներին վերաբերող անդրադարձներ կան նաեւ Աստվածաշունչ մատյանում. այստեղ արդարացումը դիտարկվում է աշխարհիկ (Ծնն. ԽԴ 16, Առակ. ԺԷ 15) եւ կրոնական (Ես. Ծ 8, Ելք ԻԳ 7, Սաղմ. Ծ 6) տեսանկյուններից: Արդարությունն առաքինություն է, որը վերահսկում է մեր վարքագիծը, ստիպում հարգել ուրիշների իրավունքները:

Սուրբ Գրքի վկայությունների համաձայն՝ անմեղները, դատավորներին դիմելով, հաճախ չէին կարողանում իրենց իրավունքները պաշտպանել եւ արդարանալ (Ելք ԻԳ 1, Ամ. Բ 6): Երբ իրապես արդարներին չէր հաջողվում ապացուցել իրենց անմեղությունը, դիմում էին Աստծուն, Ով *«պաշտպանում է պանդխտի, որբի ու այրու իրավունքները, սիրում է օտարականին, նրան տալիս է հաց ու հագուստ»* (Բ Օր. Ժ 18): Արդարները խնդրում էին նաեւ Տիրոջ ապավինությունը. *«Դատի՛ր ինձ, Աստվա՛ծ, եւ դատաստանիս ժամին արդարացրո՛ւ ինձ: Անսուրբ ազգից, մեղսագործ ու նենգ մարդուց փրկի՛ր ինձ...»* (Սաղմ. ԽԲ 1, հմմտ. Սաղմ. ԾԳ 3):

Ծննդոց գիրքը պատմում է, որ Ռաքելը, տառապելով անպտղության պատճառով, աղաչում է Աստծուն արդարացնել իրեն մարդկանց առջեւ. Տերը նրան զավակ է պարգեւում աղախնի՝ Բալլայի միջոցով. *«Աստված ինձ արդար դատեց, լսեց իմ ձայնը եւ ինձ որդի պարգեւեց»* (Ծնն. Լ 6):

Հին Ուխտը վկայում է, որ դատավորներ դառնում էին հիմնականում նահապետները կամ գերդաստանի գլուխները. նրանք էին դատ ու դատաստան անում (Ծնն. ԼԸ 24): Հետագայում դատական գործառույթներն իրականացնում է ծերակույտը: Երբ հրեաները դեգերում էին անապատում, Մովսեսը նրանց համար դատավորներ է նշանակում, որոնցից ոմանք տասը, մյուսները՝ հիսուն, իսկ ոմանք էլ հարյուր ընտանիքի վրա իրավասություններ ունեին (Ելք ԺԸ 21-26): Աստծո կարգադրությամբ՝ նրանք առավել դժվարին ու խնդրահարույց դատերը հանձնում էին Մովսեսին. *«Նրանք մշտապես թող դատեն ժողովրդին, կարեւոր գործերը թող հանձնեն քեզ, իսկ փոքր դատաստանները թող անեն իրենք...»* (Ղեւտ. ԻԴ 12): Այս դատավորները կոչվում էին հազարապետներ, հարյուրապետներ, հիսնապետներ եւ տասնապետներ. նրանք, սովորաբար, ընտանիքի կամ գերդաստանի առաջնորդներն էին (Թվոց ԻԷ 3):

Դատերն անց էին կացվում հրապարակայնորեն (Բ Օր. ԻԱ 1-9, ԻԲ 15, ԻԵ 7). այդպես էին վավերացվում նաեւ կնքված պայմանագրերն ու համաձայնագրերը (Հռութ. Դ. 1-9, Երեմ. ԼԲ 7-15): Վաղ շրջանում դեռեւս դատական հատուկ ատյաններ չկային, այդ իսկ պատճառով դատերն անց էին կացվում տարբեր վայրերում: Այսպես՝ Դեբորան՝ հայտնի մարգարեուհին, հասարակ արմավենու տակ էր դատերն անցկացնում. «Նա բնակվում էր արմավենու տակ՝ Ռամայի եւ Բեթելի միջեւ՝ Եփրեմի լեռան վրա: Իսրայելացիները նրա մոտ էին գնում դատաստանի համար» (Դատ. Դ 5): Սամուելը նշում էր որոշակի վայրեր, որտեղ անցկացնում էր դատը (Ա Թագ. Է 16, Ը 1): Համաձայն Սուրբ Գրքի՝ Հոսափատ արքան Հուդայի երկրում դատավորներ է նշանակում ու հրամայում դատերն անցկացնել արդարությամբ եւ անաչառությամբ (Բ Մնաց. ԺԹ):

Ուշագրավ է Ա Թագավորացի հետեւյալ հատվածը. Դավիթը հրաժարվում է Սավուղից վրեժ լուծելուց եւ նրան սպանելուց՝ ասելով. *«Թող Տերը դատ անի իմ ու քո միջեւ եւ իմ վրեժը քեզնից առնի, բայց իմ ձեռքը քեզ վրա չի բարձրանա: Ինչպես հին առակն է ասում՝ «Անօրեն ձեռքից է գալիս վնասը, իսկ իմ ձեռքը քեզ վրա չի բարձրանա»* (ԻԴ 13-14): Բարձրյալն է ողորմություն եւ արդարություն շնորհում բոլոր գրկյալներին (հմմտ. Սաղմ. ՃԲ 6), պատվիրում արքաներին՝ իրավունք տալ աղքատներին, պաշտպանել տնանկների որդիներին, ընկճել ամբարտավաններին (հմմտ. Սաղմ. ՀԱ 4):

Ըստ Հին Կտակարանի՝ թագավորները գերագույն դատավորներ էին՝ գրեթե բացարձակ իշխանությամբ (հմմտ. Ա Թագ. ԻԲ 16, Բ Թագ. Դ 9, Գ Թագ. ԻԲ 26): Երկնային Հայրը պատվիրում է, որ թագավորների, իշխանավորների եւ դատավորների արդարամտությունը լինի անաչառ ու անկաշառ, իսկ նրանց ընդունած որոշումներն ու վճիռները պետք է ընդունելի լինեն երկնավոր ատյանի առջեւ (հմմտ. Բ Օր. Ա 16-17, Բ Թագ. ԻԳ 3, Բ Մնաց. ԺԹ 6-10): Սուրբ Գրքի վկայությամբ՝ արդար դատաստանը Աստծո ձայնն է, իսկ անիրավ վճիռը ատելի է Նրա համար:

Ինչպես այսօր, դարեր առաջ եւս նույն խնդիրն էր առկա՝ մարդիկ հաճախ գանգատվում էին կաշառակեր ու երդմնազանց դատավորներից, նրանց ընդունած վճիռներից, անարդարությունից (հմմտ. Ա Թագ. Ը 3, Գ Թագ. ԻԱ 8-14, Ես. Ա 23, Ժ 1, Միք. Գ 11, Է 3):

Պետք է նշել, որ Աստվածաշունչը միշտ չէ, որ արդարացման խնդիրը քննարկում է մարդկային հարաբերությունների շարակարգում. հաճախ բարեպաշտներն առավել կարեւորել են արդարացումը երկնային Հոր առջեւ, ձգտել, որ իրենց մեղքերը ներվեն Տիրոջ կողմից:

Աստված, ուխտ կապելով Իսրայելի հետ (իմա՛ ժողովուրդ), պատվիրեց հավատարիմ եւ հնազանդ մնալ Իրեն ու հետեւել տասնաբանյա պատվիրաններին: Այսպիսով՝ արդարամտությունն ու արդարացիությունը պետք է դառնային աստվածընտրյալ ժողովրդի կյանքի առանցքը: Աստծո արդարությունն էական եւ անքննելի հատկություն է, Նրա գործերը ճշմարիտ են, ուղիները՝ օրինավոր (հմմտ. Բ Օր. ԼԲ 4), մինչդեռ մարդ արարածը, լինելով բնությամբ մեղանչական, հակված սխալվելուն եւ սայթաքելուն, միշտ չէ, որ անմեղ ու արդար է Տիրոջ առջեւ. *«...ապականվեցին ու պղծվեցին իրենց անօրենության մեջ, եւ չկա մեկը, որ բարություն գործի...»* (Սաղմ. ԺԳ 1): Մեղսավորին մնում է միայն մեկ բան՝ հայցել Բարձրյալի ներողամտությունը. *«Ծառայիդ հետ դատաստան մի՛ տես, քանզի ոչ մի կենդանի մարդ չի արդարանա քո առջեւ»* (Սաղմ. ՃԽԲ 2): Իսկ երբ մարդն իրապես անմեղ է, հնազանդվում է Աստծո կամքին ու հետեւում Նրա ճանապարհներին, մեկ անգամ եւս հաստատում է իր ճշմարտացիությունն ու արդարությունը Տիրոջ առջեւ. *«Դատի՛ր ինձ, Տե՛ր, իմ մեջ եղած արդարության եւ անմեղության համեմատ»* (Սաղմ. Է 9):

Հետագայում՝ Իսրայելի գերությունից հետո, արդարացման գաղափարը, ասես, վախճանաբանական երանգ ստացավ. այն սկսեցին առավելապես կապել աշխարհի վախճանի, Ահեղ դատաստանի հետ, երբ Աստված Իր անսահման ողորմածությամբ կների Իր ժողովրդի մեղքերը. *«Քեզ կնշանեմ ինձ հավիտյան, քեզ կնշանեմ ինձ արդարությամբ եւ իրավունքով, ողորմությամբ եւ գթությամբ: Քեզ կնշանեմ ինձ հավատով, եւ դու կճանաչես Տիրոջը...»* (Օս. Բ 19, հմմտ. ԺԴ 4): Այդժամ Աստված Իսրայելի հետ նոր ուխտ կկապի. *«...նոր ուխտ եմ կապելու Իսրայելի տան հետ եւ Հուդայի երկրի տան հետ: Ոչ թե ըստ այն ուխտի, որ մի օր ես ուխտեցի նրանց հայրերի հետ, երբ բռնեցի նրանց ձեռքից՝ դուրս հանելու համար նրանց Եգիպտացիների երկրից, բայց նրանք իմ ուխտին հավատարիմ չմնացին, ու ես նրանց մասին հոգ չտարա... այլ ա՛յս ուխտն է, որ ուխտելու եմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո... իմ օրենքները նրանց մտքի մեջ եմ դրոշմելու, դրանք նրանց սրտերի մեջ եմ գրելու, նրանց համար Աստված եմ լինելու, իսկ նրանք ինձ համար լինելու են ժողովուրդ...»* (Երեմ. ԼԱ 31-33): Սուրբ Գրքի համաձայն՝ երկնային Հայրն Իր ժողովրդին կշնորհի մի «արդար շառավիղ», որն իրավունք եւ արդարություն կպաշտպանի երկրի վրա (հմմտ. Երեմ. ԼԳ 15): Այստեղ կարմիր թելի նման նշմարվում է այն հիմնական միտքը, որ մարդու արդարացումը գլխավորապես Աստծո անսպառ ողորմածության եւ գթառատության հետեւանքն է. «Տերն է մեր արդարությունը» արտահայտությունը կդառնա նոր Երուսաղեմի անվանումը (հմմտ. Երեմ. ԼԳ 16):

Նոր Կտակարանում արդարացման խնդիրը քննարկվում է հիմնականում մարդ-Աստված հարաբերության շարակարգում: Նախ եւ առաջ շեշտադրվում է աստվածային արդարության ճանաչումն ու ընկալումը (հմմտ. Մատթ. ԺԱ 19, Ղուկ. Է 35, Հռոմ. Գ 4, Ա Տիմ. Գ 16), ապա՝ խոսվում Աստծո առջեւ արդարանալու (Ղուկ. Ժ 29), Նրա կողմից արդարացվելու մասին (Ղուկ. ԺԸ 14): Այսպես՝ Ղուկ. ԺԸ 14-ում վկայվում է արդարացման մասին, որը շնորհվում է ներկա պահին, մինչդեռ Մատթ. ԺԲ 37-ը նկատի ունի Ահեղ դատաստանի ժամանակ ստացած ներումն ու արդարացումը՝ *«...քո խոսքերով պիտի արդարանաս եւ քո խոսքերով պիտի դատապարտվես»*:

Պողոս առաքյալի համար մարդկության արդարացման առանցքը Քրիստոսի փրկչական խաչելությունն էր. այսինքն՝ Աստծո միածին Որդու չարչարանքներն ու խաչելությունն էին այն փրկագինը, որ վճարվեց մարդկության մեղքերի դիմաց: Խոսելով Աստծո առջեւ մարդու արդարացման մասին՝ առաքյալն ամենեւին նկատի չունի հավատարմությունն Օրենքին կամ դրա պահպանումը, այլ՝ Աստծո կողմից՝ Իրեն հավատացող եւ ապավինող մեղսագործին արդարացնելը. մեղանչողն արդարանում է աստվածային քավությամբ՝ միածին Որդու խաչելությամբ: Աստծո Որդին Իր վրա վերցրեց եւ Իր չարչարանքներով ու խաչելությամբ քավեց մարդկության ողջ մեղքերը:

Շարունակությունը՝ էջ 6

Կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Մատթեոս վրդ. Պողոսյանը, ազատվելով վանորեից տեսչությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Մայրավանքում՝ Մայր Աթոռի լուսարարապետի իշխանության ներքո:

Կորյուն աբդ. Առաքելյանը (Արմավիրի թեմ) իր հոգեւոր սպասավորությունը կշարունակի վանորեից տեսչությունում:

Իգնատիոս վրդ. Մալխասյանը եւ Վաչե աբդ. Մկրտչյանը եւս, ազատվելով համապատասխանաբար Մայր Աթոռի լուսարարապետությունում եւ վարչատնտեսական բաժնում ստանձնած պարտականություններից, իրենց ծառայությունը կբերեն վանորեից տեսչությունում՝ վանորեից տեսչի իշխանության ներքո:

Հրատարակվել է

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2017 թ.)

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել «Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները» աշխատությունը՝ հեղինակությամբ վիմագրագետ, պատմ. գիտ. թեկնածու Արսեն Հարությունյանի:

Գիրքը նվիրված է Վաղարշապատի վանքերի վիմագրական ժառանգության համակողմանի քննությանը: Այն առաջին համալիր ուսումնասիրությունն է, ուր վիմագրերի հիման վրա ընթերցողին են ներկայացվում Վաղարշապատի՝ հատկապես 17-19-րդ դարերի քաղաքական ու եկեղեցական կյանքը, հայոց հայրապետների շինարարական ու նորոգչական աշխատանքները, վանքերի ստացած նվիրատվությունները, վանական միաբանությունների կազմավորումը, ինչպես նաեւ միաբանական գերեզմանոցներն ու արձանագիր խաչքարերը: Նախկինում հրատարակված 188 վիմագրերին ավելացվել են եւս 520-ը, որոնք առաջին անգամ են ներկայացվում վիմագրագիտական քննության:

Վիմագրական ու մատենագրական սկզբնաղբյուրների եւ արխիվային նյութերի համադրմամբ ուսումնասիրվել են արձանագրություններում հիշատակված նվիրատուների, բարերարների, հաճախ նաեւ՝ նշանավոր հոգեւոր գործիչների կյանքն ու գործունեությունը: Աշխատության վերջում զետեղված են լուսանկարներ:

Գիրքը հրատարակվել է մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:

Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ - ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.

ՍԵՐՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՐՁ ԲԱԺԱՆՈՒՄ



ՍՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քիչ չեն այն դեպքերը, երբ ժամանակն ու տարածությունը վճռական ազդեցություն են ունենում մարդկային հարաբերությունների վրա: Այդպիսի իրողություններից մեկն էլ հայ երկու գրողների՝ Վահան Թեքեյանի եւ Լեւոն Զավեն Սյուրմելյանի կյանքում տեղի ունեցած բարեկամության ու անջատման պատմությունն է, երբ ժամանակն ունեցել է բարեբեր նշանակություն՝ առթելով ծանոթություն, մարդկային ջերմ փոխհարաբերություններ եւ փոխհոգածություն, իսկ տարածությունը բացասաբար է ազդել այդ հարաբերությունների ընթացքի վրա եւ տեղիք տվել անդարձ բաժանման:

1914-ին Վ. Թեքեյանը Կ. Պոլսում հրատարակել էր իր «Հրաշալի հարություն» ժողովածուն, երբ նույն թվականի հուլիսի 28-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմը նրան ազգային ու կուսակցական գործունեության նոր ոլորտներ մղեց: Նույն թվականի օգոստոսին նա թողնում է Երուսաղեմի (որն այդ ժամանակ Թուրքիայի տիրապետության տակ էր) Ս. Հակոբ վանքում Կ. Պոլսի Ազգային ժողովի ներկայացուցչի իր պաշտոնը եւ հեռանում Եգիպտոս: Ալեքսանդրիայում 1915-ին հիմնում է «Արեւ» թերթը, ակտիվորեն մասնակցում հայ գաղթականների ու որբերի օգնության եւ հետագա կյանքի կազմակերպման աշխատանքներին, մասնակցում Կիպրոսում ստեղծվող Հայկական լեգեոնի ձեւավորմանը: 1918-ի զինադադարը, ինչպես հայության մի մասին, Թեքեյանին եւս մեծ հույսեր է ներշնչում: 1919-ին նա մեկնում է Հայաստան: Նույն թվականին Փարիզում տպում է «Կես գիշերեն մինչեւ արշալույս» բանաստեղծությունների ժողովածուն՝ գրքի որոշ բանաստեղծություններում տարփողելով այդ «արշալույսը»:

1920 թ. նոյեմբերին Թեքեյանը նորից Պոլսում էր, ուր ստանձնում է «Ժողովրդի ձայնը» թերթի խմբագրապետությունը, քաջալերում նոր-նոր գրական կյանք մտնող Վազգեն Շուշանյանին, Որբունուն, Նիկողոս Սարաֆյանին, Պետրոս Զարոյանին եւ այլոց: 1921-22 ուստարում նա ստանձնում է Ազգային Կեդրոնական վարժարանի ուսուցչի եւ ապա տեսչի պաշտոնը, ուր եւ հանդիպում է վարժարանի աշակերտներից մեկին՝ Զավեն Սյուրմելյանին:

Նրանց միջեւ փոխադարձ համակրանքը ծնվում է միանգամից: Թեքեյանին գրավում են պատանի Սյուրմելյանի գրական հետաքրքրությունները, նրա լրջությունն ու մտավոր առկայծումները, Թեքեյանի խոսքերով ասած՝ պատանու «զգացումն ու կրովը, նրբանկատութիւնն ու ազնվութիւնը» եւ, ամենակարեւորը, նրա՝ բանաստեղծ լինելու հայտնությունը: Թեքեյանը, հանձին Սյուրմելյանի, ասես գտել էր իր որոնած «զաւակ»-ին, ում «տաքուկ շունչը» օգնելու էր իրեն «կեանքէն դեռ համ մը առնելու եւ բան մը յուսալու» *(Վահան Թէքէեանի նամակները Լեւոն Զաւեն Սիւրմէլեանին, Նիւ Յորք, 1950, էջ 25)*: Թեքեյանը հավատում է, թե Սյուրմելյանը պիտի «մեծնայ մաքրութեամբ... եւ աւելցած շնորհներով»՝ հանուն նրա բարիքի եւ իր սփոփանքի:

Մյուս կողմից՝ Սյուրմելյանը գերվում է վարժարանի տեսչի լրջությամբ, ում մասին նա հետագայում պիտի գրեր. «Թէ՛ տեսքով եւ թէ՛ զգացումով՝ Թէքէեան իրական ազնուականն էր միտքի...» *(նույն տեղում, էջ 11)*, նրա բանաստեղծական տաղանդով, մարդկային հոգատարությամբ: Թեքեյանն անցել էր կյանքի դժվարին բավիղներով, տեսել ու զգացել ինչպես կուսակցական ու հասարակական, այնպես էլ մարդկային բարդ ու հակասական բազում ելեւէջումներ՝ գաղափարական տեւական կռիվներ, ազգային փլուզումներ, յուրայինների ուրացումներ, օրվա հացի խնդրի լուծման դժվարություններ, երկրից երկիր թափառումներ, ընտանեկան հարկի բացակայություն: Ճակատագիրը Թեքեյանին բանաստեղծ էր կարգել, բայց նրան չէր տվել կյանքի երջանկություն: Չէր տվել նաեւ կին ու երեխա ունենալու բարեբախտություն: 1914-ին գրած «Զավակս» բանաստեղծության մեջ նա իր դժգոհությունն է հայտնում Աստծուց. «Զաւկի մը շնորհն անգամ, ո՛վ Տէր, զլացար // Ինծի ընդ միշտ...»:

Այս ամենը հանգեցրել էր նրան, որ Թեքեյանը, երբ հանդիպեց Սյուրմելյանին, արդեն քառասունն անց ամուրի էր եւ վաղուց փայփայում էր երեխա ունենալ, որին իր բանաստեղծություններում անվանում էր «տղաս» կամ «զաւակս»: Սյուրմելյանի անձի մեջ Թեքեյանը տեսնում ու զգում է հենց իր փնտրած այդ զավակին, ով կարիք ուներ նեցուկի ու օգնող ձեռքի, ով կարող էր մեծանալ ու իր միայնակ կյանքի հենարանը լինել, եւ ում ինքը կարող էր իր կյանքը տալ ու նրանից կյանք ստանալ՝ գտնելով «անոր մէջ ինքզինք» ու «կրկնուած անոր մէջ»:

Տրապիզոնում ծնված Սյուրմելյանի հայրն ու մայրը զոհ էին գնացել եղեռնին, եւ նա ճաշակել էր որբության բոլոր դառնություններն ու մանկության զրկանքները:

Իր կյանքի բերումով Թեքեյանը լավ գիտեր ցավաշատ մանկության պատճառած մորմոքները եւ մինչեւ Սյուրմելյանին հանդիպելը՝ 1919 թ., արդեն իր լավագույն բանաստեղծություններից մեկում գրել էր.

Ով երազուն մանկութիւն՝
որ մանկութիւնըս եղար,
Կը փափաքիմ, ոչ այլեւս ըզքեզ
ապրիլ վերստին:

Վահան Թէքէեանի նամակները Լեւոն Զաւեն Սիւրմէլեանին, Նիւ Յորք, 1950, էջ 25

Ու երբ հանդիպեցին 16-ամյա Սյուրմելյանն ու 43-ամյա Թեքեյանը, բացի առաջինի գրական հետաքրքրությունից ու երկրորդի գրական փորձառությունից, իրար հասկանալու ու հարազատանալու գործում քիչ դեր չխաղաց երկուսի՝ այդ տխուր մանկությունը «ոչ այլեւս» վերստին ապրելու բաղձանքը, որը Սյուրմելյանի առաջին բանաստեղծություններում արտահայտվում է որպես վիճակ ու մտածում, իսկ Թեքեյանի պոեզիայում՝ որպես ընդհանրացնող ասելիք ու բողոք:

Շարունակությունը՝ էջ 7

Սուրբծննդյան եւ Մկրտության պատկերները Էջմիածնի եւ Տրապիզոնի Ավետարաններում

Սկիզբը՝ թիվ 1

Մկրտության տեսարանը քրիստոնեական արվեստում երեւան է գալիս Դ-Ե դարերի սարկոֆագների եւ դիպտիխների քանդակների մեջ: Նույնը ունենք Էջմիածնի հայտնի Ավետարանի փղոսկրյա կազմի վրա՝ այն տարբերությամբ միայն, որ առաջինում որոշակիորեն առկա է հռոմեական-ռավեննական դրոշմը, իսկ երկրորդում այն բացակայում է ***(Գ. Հովսեփյան***, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2, Եր., 1987, էջ160): Էջմիածնի Ավետարանի վերջին մանրանկարը՝ «Մկրտությունը», բազմաթիվ առումներով ամենաուշագրավն է: Հիսուսն այստեղ երեւում է մանկան տեսքով՝ մեզ հիշեցնելով մկրտության խորհուրդը, որը նոր կյանքի ծնունդն է: Աստծո ձեռքը, լույսի ճառագայթները, որոնք իջնում են Հիսուսի վրա երկնքից եւ աղավնու կտուցից, ավելի են ընդգծում նշված տեսարանի աստվածհայտնության բնույթը: Բացի այդ, նույն գծի վրա տեղադրված Աստծո ձեռքը, աղավնին եւ Հիսուսը ներկայացնում են Երրորդության պատկերը: Նկարի չորս կողմերը զարդարում են հավալուսինները, որոնք ամբողջացնում են պատկերի գաղափարական իմաստը ***(Ս. Տեր-Ներսեսյան***, Հայ արվեստը միջնադարում, Եր., 1975, էջ 61) (նկ. 3): Ըստ «Բարոյախոսի»՝ հավալուսինը, իր կուրծքը պատռելով, իր արյունն է հորդում ձագերի վրա, որպեսզի կենդանացնի նրանց: «Հաւ է մեծ հաւալսանն եւ յոյժ որդեսէր. եւ յորժամ լինին ձագն, ոչ մեկնին ի նոցանէ ծնողքն, ապա կուտք առնուն ինքն եւ ձագն եւ սկսանին մագլչաւք ցտել զերեսս ծնաւղին, եւ նա առ քաղց եւ առ գութն սպանանէ զձագն եւ հեռանան ի միմեանց, եւ յետ երեք աւուր գա մայրն եւ առ գութն ցտէ զկողն եւ հանէ» ***(Н. Марр.*** Сборники притч Вардана. ч. 3, СПб., 1894, с. 142-143): Նույնը տեսնում ենք Քրիստոսի պարագայում. խաչի վրա պատռված կողքից ջուր եւ արյուն են բխում. ջուրը խորհրդանշում է Մկրտությունը, իսկ արյունը՝ այն գինին, որը Հիսուսն օրհնեց՝ ասելով. «... զի ա՛յդ է արիւն իմ նորո՛յ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց» (Մատթ. ԻԶ 28): Այլ մանրանկարներում, օրինակ՝ Տրապիզոնի Ավետարանում, Հիսուսի մկրտության տեսարանն ունի հետեւյալ կառուցվածքը. Հորդանանի աջ ափին ներկայացվում է Հովհաննես Մկրտիչը՝ իրեն բնորոշ արտաքինով՝ մորուքավոր ու երկար մազերով, մորթեղեն հագուստով: Նրա աջ ձեռքը հանգչում է Հիսուսի գլխի վրա, ձախը՝ պարզած պահում է Ադամի գլուխը:

Նկ.3 Մկրտություն Քրիստոսի, Էջմիածնի Ավետարան, 989 թ., ՄՄ 23744

Գետի ձախ ափին ներկայացվում են Հիսուսի մկրտության արարողությանն սպասարկող հրեշտակները, որոնց սկսել են պատկերել Ե-Զ դարերից: Նրանց ձեռքերին սրբիչներ եւ հանդերձներ են (նկ. 4):

Մկրտությունը ոչ միայն սրբում է ադամական մեղքը, այլեւ Սուրբ Հոգու շնորհներն է բաշխում ***(Վաչէ ծ. վրդ. Իգնատիոսեան***, Հայկական մանրանկարչութիւն եւ Թորոս Ռօսլին, Վենետիկ - Ս. Ղազար, 1982, էջ 29): «Աղաւնին աւետաբեր է շնորհաց. որպէս ի տապանն Նոյի եբեր զշիւղ ձիթենւոյն, որ ցուցանէ զշնորհս մկրտելոցն»,- գրում է սբ Գրիգոր Տաթեւացին ***(Գրիգոր Տաթեւացի***, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 525):

Մկրտության պահին Սուրբ Հոգի Աստված, որ Իր էությամբ եւ ներկայությամբ լցնում է ամբողջ տիեզերքը (հմմտ. Եր. 23-24), Իր ներկայությունը մարմնավորապես զգալի եւ տեսանելի դարձրեց մարդկանց աղավնու կերպարանքով (Մատթ. Գ 16, Մարկ. Ա 10, Ղուկ. Գ 21-22): «Մկրտություն» մանրանկարում արտահայտված են Սուրբ Հոգու աղավնակերպ էջքի երեք խորհուրդները:

Ա. Սուրբ Երրորդության հայտնություն: Նոր Կտակարանի մեջ առաջին անգամ կտեսնենք աստվածության երեք անձերի միաժամանակ հայտնությունը: Վերջինիս աղավնակերպ լինելը սբ Գրիգոր Լուսավորիչը բացատրում է հետեւյալ կերպ. «Որպեսզի տեսնողներին սովորեցնի, թե չկա ոչ մի այլ հնար՝ մոտենալու Աստվածորդուն, եթե ոչ անմեղությամբ, արդարությամբ ու սրբությամբ» *(Սուրբ Գրիգորի վարդապետությունը, Ս. Էջմիածին, 2007, էջ 97)*:

Բ. Սուրբ Հոգու տեսանելի հայտնությունն ապացույց է նրա առանձին անձնավորություն լինելուն: Հին Կտակարանը հաճախ խոսում է Հոգու մասին, բայց Նա

Նկ.4 Մկրտություն Քրիստոսի, Ավետարան Տրապիզոնի, Ժ դար

կարծես միշտ մնում է աստվածային, անտեսանելի եւ խորհրդավոր ուժ: Սակայն այստեղ հայտնվում է աղավնու պես «մարմնավոր երեւույթով»: Հոր եւ Որդու կողքին այս երեւումը ցույց է տալիս Սուրբ Հոգու զանազանությունը Հորից եւ Որդուց եւ Նրա անջատ անձնավորություն լինելը, թեպետ միաժամանակ անբաժանելի միություն է Հոր եւ Որդու հետ:

Գ. Սուրբ Հոգու հատկանիշը: Սուրբ Հոգին սրբության եւ մաքրության խորհրդանիշ աղավնու կերպարանքով հայտնվեց՝ Աստծու մեկ հատկանիշը արտահայտելու համար *(Զարեհ արք. Ազնաւորեան, Մեկնութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հաւատամքին, Հալէպ, 2008, էջ 324)*:

Այսպիսով՝ «Մկրտություն» թեման բովանդակող մանրանկարներն ու քանդակները մեզ սովորեցնում են, որ Սուրբ Հոգու էջքով է, որ մարդկությունը սրբվում ու մաքրվում է եւ միաժամանակ սուրբ ու մաքուր կյանքի ապրելու կոչումն է ստանում: Այդ են խորհրդանշում նաեւ Հորդանանի մեջ պատկերված ձկները, որոնք մարդկանց փրկագնված հոգիներն են *(Կ. Մաթեւոսյան, Ա. Ավետիսյան, Ավետարանական պատկերներ, Եր., 1993, էջ 36)*:

Արթուր սրկ. ԱԲԳԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(Ժամանակը եւ առանձնահատկությունները)

Սկիզբը՝ 2016-ի թիվ 23-24 եւ 2017-ի թիվ 1

Այս ճանապարհին Մկրյանը երբեմն հասնում է խորհրդային գրականագիտությանը բնորոշ գռեհիկ սոցիոլոգիզմի՝ Նարեկացու ողբը պայմանավորելով մե՛կ «գյուղացիության ֆեոդալական կեղեքումով» (էջ 198), մե՛կ «աշխատավորության (գյուղացիության) բողոքի արտահայտությամբ» (էջ 202), մե՛կ արտաքին քաղաքական հանգամանքներով: Իսկ մեկ այլ առիթով էլ ավելացնում է՝ 12-րդ դարում «…. հայ վերածնությունը, զուգադիպելով վրացական եւ ադրբեջանական գրականությունների աննախընթաց զարգացմանը (Ռուսթավելի եւ Նիզամի), նորից վերելք է ապրում» (էջ 255): 12-րդ դարում հայ գրականությունը ոչ թե զուգադիպում է վրաց եւ չեղած ադրբեջանական գրականություններին, այլ զարգանում է իր բնականոն հունով՝ առաջ մղելով այնպիսի նշանավոր մի բանաստեղծի, որպիսին Շնորհալին է եւ, ընդհանրապես, ամբողջ կիլիկյան գրական դպրոցը: Ի՞նչ ընդհանրություն կարելի է գտնել մի կողմից՝ Շնորհալու, մյուս կողմից՝ Ռուսթավելու եւ ոչ թե ադրբեջանցի (Գանձակում ծնված լինելը դեռեւս ոչինչ չի նշանակում), այլ պարսիկ բանաստեղծ Նիզամու միջեւ: Կարծում եմ՝ ոչ մի:

Ի վերջո, այս գաղափարները մարմնավորվեցին առանձին գրքում՝ նախ ռուսերեն (Մոսկվա, ԽՍՀՄ ԳԱ հրատ., 1963), ապա հայերեն լույս տեսավ Վազգեն Չալոյանի «Հայկական Ռենեսանս» *(Երեւան, Հայպետհրատ, 1964)* աշխատությունը: Գրքի նպատակադրումը ձեւակերպված է այսպես. «Այս աշխատությունը, ըստ էության, առաջին խոշոր մենագրությունն է ոչ եվրոպական ժողովուրդների Ռենեսանսի՝ Վերածնության վերաբերյալ, որտեղ հեղինակը բազմակողմանիորեն՝ կրոնի, փիլիսոփայության, գրականության եւ արվեստի նյութերի հիման վրա քննարկվող հայկական Վերածնության հարցերը կապում է երկրի սոցիալ-տնտեսական պատմության համապատասխան էտապների հետ» (էջ 2):

Ելակետն այս է. «Եվրոպայում իրոք վերածնվեց անտիկ աշխարհի հոգեկան կյանքը…», եւ ըստ Ուլրիխ ֆոն Հուտտենի՝ «մտքերը արթնացան, կյանքը դարձավ հաճույք» (էջ 3), նպատակը՝ այս. «Հայկական Վերածնությունը պատմականորեն այնպիսի նշանակալից երեւույթ է, որ ոչ միայն չի կարելի անտեսել, այլեւ պետք է բացահայտել իր ողջ լիակատարությամբ եւ խորությամբ որպես առաջադիմության մի շրջան այդ երկրի կուլտուրայի պատմության մեջ» (էջ 8):

Մարքսիզմի դասականներից արված մեջբերումներով հեղինակը բացահայտում է ժամանակաշրջանի հանրային գիտակցության ձեւերը որպես պատմամշակութային երեւույթ, անդրադառնում սոցիալ-տնտեսական հիմունքներին: Այն հստակ տպավորությունն է, որ եթե մարքսիզմի դասականները դրական արտահայտված չլինեին Վերածննդի մասին, խորհրդային հետազոտողներն ընդհանրապես կշրջանցեին այն կամ կտային այլ՝ գուցեեւ ոչ առաջադիմական բացատրություն:

Հեղինակն իր քննությունն ի մի է բերում հետեւյալ վերնագրերի ներքո՝ «Ակնարկ Անիի ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության», «Հայկական Վերածնության սոցիալ-տնտեսական հիմունքները», «Վերածնության կուլտուրան Հայաստանում»: Վերջին դեպքում դասակարգային միջամտությունն ակնհայտ է՝ «աշխատավոր ժողովրդի կուլտուրայի գաղափարական հիմունքներն» առանձին են դիտված, «շահագործող դասակարգերի առաջադիմական խավերինը»՝ առանձին՝ որպես իրար լրացնող ուժեր:

Թոնդրակյան շարժումը դիտվում է որպես «Ռեֆորմացիա»՝ «եկեղեցու դոգմաների ռեֆորմ», «ֆեոդալական հասարակության իշխող սոցիալական կարգի դեմ ուղղված պայքար» (էջ 55): Եվրոպայում դա արտահայտվեց նրանով, որ «աշխատավոր մասսաները դուրս եկան» կաթոլիկ եկեղեցու դեմ: Նույն սկզբունքով դիտվում է թոնդրակյան շարժումը, որին պետք է հաջորդեր պավլիկյան շարժումը: Ըստ նրա՝ «Բյուզանդական-կովկասյան աշխարհը Արեւելքի եւ Արեւմուտքի միասնական ամբողջական աշխարհի բաղկացուցիչ մասն էր: Այդ աշխարհի մասերի փոխազդեցության ոլորտի մեջ էր մտնում նաեւ Հայաստանը, որն ազդում էր նրա վրա, կրում նրա ազդեցությունը, որն արժեքներ մտցրեց այդ աշխարհի ընդհանուր գանձարանը եւ այնտեղից ընդունեց համընդհանուր արժեքներ: Փոխազդեցության այս պրոցեսում Հայաստանի կուլտուրայի պատմության մեջ ամենանշանակալից երեւույթը Վերածնունդն էր» (էջ 68): Սա ընդհանուր հայացք է, որտեղ որոշակիությունը, խոսքի առարկայականությունը բացակայում է: Չալոյանն այնուհետեւ փիլիսոփայական դատողություններով փորձում է Վերածննդի շուրջ հաշտեցնել Արեւմուտքն ու Արեւելքը, որից հետո առանձնացնում է Արեւելքի Վերածնության տարբերությունները, ըստ որի՝ հայկական «Վերածնությունն սկսվեց Արեւմուտքի Վերածնության երեւան գալուց շատ առաջ»: Եվ երկրորդ՝ «Հայաստանում Վերածնությունն իր զարգացման ընթացքում բնավ չհասավ Արեւմուտքի ավելի ուշ շրջանի Վերածնության մակարդակին» (էջ 70): Այսքանից հետո՝ էլ ինչ Վերածնության մասին կարող է խոսք լինել եվրոպական չափանիշներով:

Շարունակությունը՝ էջ 6

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՁՈՐԱՎԱՐ

Սուրբ Սարգսի վարքը: Իբրեւ պատմական անձնավորություն՝ սբ Սարգիս զորավարն ապրել ու գործել է 4-րդ դարում, եղել է Կեսարիայի հռոմեական զորավար, խուսափել Հուլիանոս Ուրացող կայսեր (361-363) հալածանքից, նախ ապաստանել Հայոց Արշակ Բ կամ նրա հոր՝ Տիրան թագավորի մոտ, ապա վերջինիս խորհրդով անցել Պարսկաստան, կարգվել Շապուհ II-ի զորահրամանատար: Երբ թագավորն իմանում է, որ Սարգիսն իր բանակի զինվորներին քրիստոնեություն է քարոզում, կանչում է եւ հրամայում զոհ մատուցել կրակին: Սարգիսը պատասխանում է, որ ինքը հավատում է մեկ Աստծո՝ Ամենասուրբ Երրորդությանը, որ Ստեղծիչն է երկնքի եւ երկրի: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստված չեն, եւ ինքն էլ, հողեղեն լինելով, կարող է այն մարել: Խոսքից անցնում է գործի եւ կործանում է կրակի բագինը՝ կրակը հանգցնելով: Զայրացած մոգերն ու ամբոխը հարձակվում են Սարգսի եւ նրա որդու վրա, քարերով, փայտերով, աքցաններով եւ բռունցքներով սկսում են ծեծել եւ չարչարել: Այս չարչարանքներց զոհվում է Մարտիրոսը, որ կոխկռտվելով ընդունում է մարտիրոսական պսակը:

Իսկ Սարգսին թագավորի հրամանով բանտ են առաջնորդում այն հույսով, որ կարող է զղջալ եւ կրակապաշտ դառնալ, եւ թագավորը կկարողանա շարունակել օգտվել նրա զինվորական կարողություններից: Բայց Սարգիս զորավարը հաստատ է մնում իր հավատքի մեջ, ուստի գլխատման վճիռ են կայացնում: Երբ հասնում է գլխատման տեղը, աղոթում է.

«Ո՛վ Տէր՝ Քրիստոս Աստված իմ, նրանք, որ կհիշեն իմ անունն իրենց նեղության մեջ եւ կկատարեն իմ նահատակության հիշատակը ուխտով եւ պատարագով, ինչ որ ուզեն Քեզանից, լսիր եւ շնորհիր նրանց իրենց խնդրանքը»: Այդ ժամանակ երկնքից ձայն է լսվում. *«Պիտի տամ քո խնդրանքը եւ պիտի կատարեմ աղաչանքդ, իսկ դու երկար վայելիր քեզ համար պատրաստված բարիքները»*:

Ապա դահիճը կտրում է նրա գլուխը, եւ անմիջապես լույս է ծագում նրա վրա: Տեսնելով այս՝ նրա պարսիկ 14 զինվորները, որոնք հավատարմորեն ծառայում էին նրան, ավելի են հաստատվում իրենց քրիստոնեական հավատքի մեջ, վերցնում են մարմինը, պատում մաքուր կտավով, որպեսզի պատվով թաղեն: Սակայն թագավորը, իմանալով այս մասին, հրամայում է նրանց էլ նահատակել: Երբ բոլորովին փչացնել էր ուզում բոլոր նահատակների մարմինները, լուր է գալիս, որ թշնամին իր երկիրն է մտել, եւ մոռանալով մարմինները՝ գնում է պատերազմ: Ապա հավատացյալները գիշերով գալիս եւ վերցնում են բոլոր նահատակների մարմինները եւ պատվով թաղում Համիան կոչված քաղաքում:

Քրիստոնյաները վերցրել են նաեւ սրբի մարմինը, տարել Ասորիք: Մաշտոցը նրա մասունքները բերել է Հայաստան, ամփոփել Կարբի ավանում, Ուշիում եւ Գագա դաշտում նրա անունով շինել է եկեղեցիներ, որով Սարգիս զորավարը սրբացվել է Հայոց Եկեղեցու կողմից՝ իբրեւ քրիստոնեական կրոնի համար մարտնչող նահատակ: Նրա վարքաբանությունն էլ գրավոր ավանդվել է մեզ՝ իբրեւ վկայաբանություն (սբ Սարգսի ամբողջական պատմությունը տակավին եպիսկոպոս եղած ժամանակ գրել է Ներսես Շնորհալի հայրապետը՝ Հաղբատի վանքի վանահայր Գեւորգ եպիսկոպոսի խնդրանքով):

Սբ Սարգիսը մեծամեծ հրաշքներ գործող սուրբ է: Նա հատկապես հանդես է գալիս իբրեւ գերյալներին, բանտարկյալներին եւ հիվանդներին օգնող եւ հրաշքներ գործող: Անգամ պարսիկները նրան անվանում էին «անհաղթ վկա եւ կատարիչ ամենայն խնդրուածոց»: Այլադավանների կողմից գերված-շղթայվածներին ազատելու մոտիվն առաջին անգամ հիշատակված է Կիրակոս Գանձակեցու (13-րդ դար) Հայոց պատմության մեջ՝ կապված մոնղոլների կողմից գերված Վանական վարդապետի եւ Գագայում գտնվող Սբ Սարգիս սրբավայրի զորության հետ: Երբ թաթարները փրկագնով Վանական վարդապետին գերությունից ազատում են, իսկ Կիրակոսին եւ ընկերներին՝ ոչ, Վանականը հուսադրելով Կիրակոսին, ասում է. *«Որդյա՛կ, ես երթամ անկանիմ առ ոտս սրբոյ Նշանին, որ յանուն սրբոյն Սարգսի, խնդրել նովաւ ի Տեառնէ վասն քո եւ այլ եղբայրցն որք կան ի ձեռս անօրինաց, զի թերեւս զերձուսցէ եւ զքեզ Աստուած գթութեամբն Իւրով»*: Դրան անմիջապես Կիրակոսն ավելացնում է. *«Զի էր խաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, եւ մանաւանդ առ գերիս, զի որք ապաւինէին ի նա բոլորովսրտիվ, ինքն իսկ սուրբ վկայն Սարգիս բանայր զդրունս բանտից եւ արգելանաց, եւ լուծանէր զերկաթսն, եւ առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ի տեղիս իւրեանց եւ համբաւ սքանչելյացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս…»*:

Սբ Սարգսի տոնը: Սրբի հիշատակը տոնում ենք Առաջավորաց պահքին հաջորդող շաբաթ օրը, այս պատճառով հաճախ սխալմամբ կոչվում է սբ Սարգսի պահք:

Ըստ ուշ միջնադարից վկայված աղոթքներում գործածված բանաստեղծական մակդիրների՝ սբ Սարգիսը ներկայանում է մի քանի տարբեր, բայց համազոր դրական հատկանիշներով: Նա լավ սպառազինված, արիասիրտ, պաշտպան ու պահապան զորական է, որը միանգամայն համախոս է նրա եկեղեցական վկայաբանությանը, միաժամանակ եւ ատենահաս, այսինքն՝ ժամանակին հասնող եւ գերյալներին ազատող սուրբ: Ժողովրդական բանահյուսության մեջ սրբի ամենատարածված մակդիրն է ատենահասը (ատանահաս սուրբ Սարգիս), որն արդյունք է նրա՝ ձիավոր պատկերացման (ձին՝ իբրեւ արագավազության, արագահասության խորհրդանիշ), որից էլ՝ սրբի երկակի հատկանիշներով օժտված «ատենահաս բոզ ձիավոր սուրբ Սարգիս» մակդիրը: Ուրեմն՝ ոչ միայն ձիավոր, այլեւ գորշասպիտակավուն (բոզ) ձիավոր, որ գալիս է ճերմակ ձիավոր հերոսների հնօրյա պատկերացումից: Ժողովրդական բնագրերում առկա՝ սբ Սարգսին նվիրված չափածո աղոթքներում ձիավոր սուրբը հաճախ հանդես է գալիս որդու՝ սբ Մարտիրոսի հետ, մի մոտիվ, որ դարձյալ սերում է ժողովրդական վկայաբանությունից:

Գործառույթները: Հայ բանավոր ավանդության մեջ սբ Սարգիսը հանդես է գալիս մի շարք հատկանիշներով, որոնք նրան դարձնում են բազմագործառույթ սուրբ: «Ատենահաս» մակդիրն առնչվում է սբ Սարգսին տրվող մուրազատու (փափագակատար) անվանը, որը տրվում է նաեւ այլ սրբերի: Բայց սբ Սարգսի դեպքում այդ մակդիրն ունի առավել որոշակի իմաստ եւ կապվում է սիրո եւ ամուսնության փափագի կատարման հետ, եւ դա դառնում է սրբին բնութագրող ամենակարեւոր հատկանիշը:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(Ժամանակը եւ առանձնահատկությունները)

Սկիզբը՝ էջ 5

Ժողովրդական գծի վրա նա հիշում է «Սասնա ծռեր» դյուցազներգությունը, հայրենները, աշուղական պոեզիան, գրական դեմքերից տալիս Գոշի, Այգեկցու, Ֆրիկի անունները, այնուհետեւ անցնում Նարեկացուն, Մագիստրոսին, Շնորհալուն, Որոտնեցուն, երկու Երզնկացիներին, Հերացուն, Իմաստասերին, Աղթամարցուն, Թլկուրանցուն, քննում մի քանի մանրապատումներ, անդրադառնում մանրանկարչությանը, ճարտարապետությանը եւ անվերապահորեն հաստատում հայկական Վերածննդի գոյության իր հիմնական դրույթը: Միջանկյալ նշենք, որ աշուղական պոեզիան եւ գոնե Քուչակին վերագրվող հայրեններն ավելի ուշ ժամանակի գրական-մշակութային իրողություններ են եւ այդ տեսադաշտում չպետք է ընդգրկվեին:

Գրքին կցված Նիկոլայ Կոնրադի (1891-1970) «Վերջաբանում» Վերածնությունը դիտարկվում է որպես Արեւմուտքով պայմանավորված զարգացման ու վերափոխությունների ընդհանուր պատկեր. «Կարելի է մտածել, որ մենք կգանք այն եզրակացության, թե Իտալիայի պատմության մեջ «Վերածնության էպոխա» կոչվող էտապը հանդիսանում է ոչ միայն Իտալիայի, այլեւ այն բոլոր երկրների ժողովուրդների պատմության պատկանելությունը, որոնք ունեն երկար, անընդհատ զարգացող, կուլտուրական բովանդակությամբ հարուստ պատմական կյանք, հետեւաբար, նրանց պատմության համար Վերածունդը «մասնավոր դեպք» չէ, այլ ընդհանուր պատմական օրինաչափություն: Կարելի է մտածել,- շարունակում է նա,- որ զանազան երկրների «Վերածնության էպոխաների» համեմատությունը մեզ ցույց կտա, որ այդ էպոխաների համար հիմնականը հանդիսանում է ոչ թե իր երկրի անցյալին, իր «անտիկ շրջանին» դիմելը, այլ հումանիզմը <....>, այսինքն՝ մարդուն դիմելը» (էջ 228):

«Վերածնունդ» եզրույթի այսպիսի ազատ օգտագործումն այն դարձնում է խիստ պայմանական՝ ինչպես նմանությունների մատնանշումով, այնպես եւ՝ տարբերությունների: Ժամանակատարածական ազատ սահմաններ ունեցող այսպիսի Վերածնության դրույթը հաստատելու համար Կոնրադը դիմում է տարատեսակ լրացյալ միջամտությունների եւ, ի վերջո, առանձնացնում «ինքնուրույն» եւ «արտացոլված» «Վերածնության էպոխաներ» (էջ 229), ըստ ամենայնի, ոչինչ չասող ձեւակերպումները: Չմոռանանք՝ Կոնրադը ճապոնական, չինական եւ կորեական գրականությունների մասնագետ էր եւ հակված էր եվրոպական Վերածննդի սահմաններն ամեն կերպ ձգել մինչեւ ծայր Արեւելք, ուր այդ մասին համապատասխան դարաշրջանում պատկերացում անգամ չեն ունեցել: Այստեղից էլ նրա պատկերացրած Վերածննդի անվերջ առաձգականությունն ու կատարյալ անորոշությունը:

Պետք է վերացնել նաեւ հարեւան ժողովուրդներից իբր թե ետ չմնալու կեղծ մրցակցային վիճակի մտայնությունը: Եթե 1947-ին Շ. Նացուբիձեն հրատարակել է «Ռուսթավելին եւ արեւելյան Վերածնունդը» գիրքը, ապա նախ պետք չէ այն նմանակել եւ այնուհետեւ, խանդով լցված, համարժեքը որոնել սեփական գրականության մեջ, որովհետեւ «արեւելյան Վերածնունդ» արտահայտության «Վերածնունդ» եզրույթը պայմանական է: Այս տեսակետից տեղային առանձնահատկությունների այլ բնութագրով պետք է ընկալել ու գնահատել ոչ միայն Չալոյանի «Հայկական Ռենեսանս» գրքին կցված Կոնրադի հիշյալ վերջաբանը, այլեւ Վլադիմիր Ժիրմունսկու «Ալիշեր Նավոյին եւ Վերածննդի խնդիրը արեւելյան գրականություններում» (1961, ռուսերեն) հոդվածը: Միանգամայն տեղին է ռուս հին գրականության պատմաբանի՝ բուն Վերածննդի էությունից բխող ձեւակերպումը. «...Վերածնությունը միջանկյալ մշակութային տեսակի՝ միջնադարի վրայով կամուջ է նետում անտիկ շրջանին» (Դ. Լիխաչով, 10-17-րդ դարերի ռուս գրականության զարգացումը, Լենինգրադ, 1973, էջ 10, ռուսերեն): Ինչպես Ս. Լոսեւի «Վերածննդի գեղագիտությունը», այնպես եւ Ն. Կոնրադի «Արեւելք եւ Արեւմուտք» աշխատություններում Չալոյանի գրքի կապակցությամբ թեեւ անդրադարձներ կան նաեւ հայկական վերածննդին, բայց երկու դեպքում էլ հիմքում նույն մարքսիզմն է: Կոնրադը տեսակետ է հայտնում. «Հայաստանի համար, օրինակ, լիովին իրական են նույն դասական, այսինքն՝ հունահռոմեական ժառանգությունը, ինչ որ եւ Իտալիայի համար...»: Նա այդ չափազանցված հարազատությունն այնքան է խորացնում, որ ի վերջո հանգում է այսպիսի հարմարեցված դատողության. «Հայաստանի պատմությունը հնուց նույնքան պատկանում է Արեւմուտքին, որքան Արեւելքին: Այդ պատճառով Վերածնության դարաշրջանի սկզբնավորումը, ծագումը Հայաստանում անգամ կարող են մեկնաբանվել որպես Արեւմուտքի Վերածնության շրջանակների անհրաժեշտ քննություն» (Ն. Կոնրադ, Արեւելք եւ Արեւմուտք, 1966, էջ 22, ռուսերեն):

Մկրյանի, Չալոյանի նույն այս տեսակետը շարունակվում է Հրանտ Թամրազյանի «Հայ քննադատություն» (գիրք Բ, Եր., «Սովետական գրող», 1985) աշխատության մեջ: Նա առանձնացնում է «Հայաստանը 10-րդ դարում եւ վաղ վերածնունդը», իսկ Կոստանդին Երզնկացու կապակցությամբ՝ «Վերածնության մեղեդիները» բաժինները եւ հիմնավորապես պաշտպանում շրջանառված տեսակետը: Այստեղ եւս քաղաքական ու տնտեսական զարգացումը բնորոշվում է «վերածնունդ» բառով, որը վերածվում է դարաշրջան բնութագրող եզրույթի: Գրականագետը հարցնում է. «Վեճը հատկապես ծավալվում է հայկական վերածննդի շուրջ: Եղե՞լ է, թե՞ չի եղել հայոց վերածնունդ, համապատասխանո՞ւմ է արդյոք այդ վերածնունդ կոչվածը այն չափանիշներին, որ նկատել են մարքսիզմի դասականները» (էջ 27): Ըստ նրա՝ նույն մարքսիզմի հիմունքներով ոմանք (Բաբկեն Առաքելյան) պնդել են, որ «...Հայաստանում տեղի է ունեցել ոչ թե վերածնունդ, այլ սովորական զարգացում, քանի որ մեր կյանքի հատկությունները եւ երեւույթները չեն համընկնում եվրոպական վերածննդի բնորոշ գծերին» (էջ 27): Բայց Թամրազյանը նույն մարքսիզմի տեսությամբ ապացուցում է հակառակը:

Մարքսիզմի դասականներն ինչ էլ ասած լինեն, ինչպես էլ ասած լինեն, նրանց խոսքը չի կարող վերաբերել Հայաստանին, որովհետեւ նրանց տեսադաշտում Հայաստան չի եղել: Ուստի նրանցից ինչ մեջբերում էլ արվի, ինչպես էլ մեկնաբանվի, սոսկ հարմարեցում պետք է համարել, իսկ Վերածննդի գոյությունը՝ պարզ ընդօրինակություն:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Սկիզբը՝ էջ 3

Մենք արդարանում ենք, քանզի մեզ համար խաչվեց ու հարություն առավ Փրկիչը. աներեր հավատով մասնակից ենք դառնում փրկագործությանը, *«...որովհետեւ Աստծո արդարությունը, որ հավատից է, հավատի՛ համար է հայտնվում, ինչպես որ գրված է, թե՝ արդարը հավատով է ապրելու»* (Հռոմ. Ա 17): Այսինքն՝ Պողոս առաքյալը կարեւորում է «արդարացումը հավատի միջոցով»:

Նրան հանդիմանում էին, որ արդարացման մասին նրա ուսմունքի հիմքում հավատն է, թե իբր այդ ուսմունքը չի ընդգրկում բարոյական-վարքագծային դրդապատճառներ, որոնք մարդուն կստիպեն հավատարիմ մնալ Աստծուն եւ հնազանդվել Նրան: Այս մասին հստակ վկայում է Հռոմեացիներին ուղղված թուղթը. *«Ուրեմն, ահա թե ինչպես են նախատում մեզ, եւ ինչպես ոմանք մեր մասին ասում են իբր թե ասած լինենք՝ չարի՛ք գործենք, որպեսզի բարին գա...»* (Գ 8): Վերոնշյալ մեղադրանքին Պողոս առաքյալը պատասխանում է՝ մենք Քրիստոսի հետ արդեն իսկ մահացել ենք մեղքի համար, ինչպե՞ս շարունակենք դրա մեջ ապրել (հմմտ. Հռոմ. Զ 2): Ապա հիանալի հիմնավորում է իր վարդապետությունը. *«...մենք բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, Նրա մահով է, որ մկրտվեցինք: Մկրտությամբ թաղվեցինք Նրա հետ մահվան մեջ, որպեսզի, ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես եւ մենք քայլենք նոր կյանքով. որովհետեւ, եթե Նրա մահվան նմանությամբ տնկակից եղանք Նրան, պիտի լինենք նաեւ Նրա հարության նմանությամբ...»* (Հռոմ. Զ 3-5): Փրկչի՝ Քրիստոսի հետ խաչվեց մեր միջի հին մարդը, որպեսզի քայքայվի մեղքի մարմինը, եւ մենք այլեւս չծառայենք մեղքին (հմմտ. Հռոմ. Զ 6): Այսինքն՝ Հայրը, Իր միածին Որդուն զոհաբերելով, մեզ ազատեց մեղքի ճիրաններից. այլեւս մեղքի ծառաներ չենք եւ պետք է ապրենք նոր՝ նորոգ կյանքով, մեռած համարենք մեզ մեղքի համար, բայց կենդանի՝ Աստծու համար:

Սուրբ Գրքում արդարացման խնդիրը քննարկվում է նաեւ վախճանաբանական համատեքստում: Պողոս առաքյալն իր Թղթերում հիշեցնում է Ահեղ դատաստանի մասին եւ նկարագրում, թե ինչպիսին պետք է լինեն ճշմարիտ քրիստոնյայի վարքագիծն ու կյանքը. *«...յուրաքանչյուրի գործը հայտնի կլինի. որովհետեւ դատաստանի օրը այդ պիտի երեւա, քանի որ կրակո՛վ հայտնի պիտի լինի. եւ յուրաքանչյուրի գործը, ինչպես որ է, կրա՛կը պիտի փորձի...»* (Ա Կորնթ. Գ 12-13): Նա զգուշացնում է, որ չպետք է փորձել Աստծուն, ինչպես դա արեց Իսրայելը, չպետք է կասկածի տակ դնել Նրա անսասանելի արդարամտությունը, ողորմածությունն ու անսահման սերը (հմմտ. Ա Կորնթ. Ժ 1-13). աներկմտելի հավատը, վստահությունն ու խոնարհությունն են այն հիմնաքարերը, որոնց վրա կառուցվում է դեպի արդարացում տանող սյունը: Պողոս առաքյալի Թղթերում ընդգծվում է այն միտքը, որ *«ի Քրիստոս հավատալով ենք արդարանում», քանզի «...Աստծու արդարությունը ի Հիսուս Քրիստոս եղած հավատի միջոցով է բոլոր հավատացողների համար. չկա ոչ մի խտրություն. որովհետեւ բոլորն էլ մեղք գործեցին եւ զրկվեցին Աստծու փառքից, բայց Նրա շնորհիվ ձրի արդարացան Քրիստոս Հիսուսի միջոցով եղած փրկությամբ»* (Հռոմ. Գ 22-24):

Արդարացմանն անդրադարձել է նաեւ Հակոբոս առաքյալը. նա իր

Ընդհանրական թղթում նկարագրում է այն բոլոր վտանգները, որոնք խարխլում են ճշմարիտ քրիստոնյայի հոգեւոր կյանքը: Երկրային վայելքները, շահը, նյութապաշտությունը խոչընդոտներ են առ Աստված տանող ճանապարհին: Հակոբոս առաքյալն առավել կարեւորում է հավատի վկայությունները՝ գործերը, քանզի «հավատն առանց գործերի մեռած է» (հմմտ. Հակ. Ա 17): Հավատացյալի կյանքը, առանց հավատն արտահայտող գործերի, ոչինչ է. *«Ո՛վ փուչ մարդ, ուզո՞ւմ ես իմանալ. հավատը դատարկ բան է առանց գործերի: Աբրահամը՝ մեր հայրը, չէ՞ որ գործերով արդարացավ՝ սեղանի վրա հանելով իր որդուն՝ Իսահակին՝ որպես զոհ...»* (Հակ. Բ 20-21): Ըստ Հակոբոս առաքյալի՝ հավատը «գործակից» է լինում գործերին, եւ *«գործերով էլ հավատը կատարյալ է դառնում»* (հմմտ. Հակ. Բ 22):

Արարչի կատարելության եւ գորության համեմատ մեր մեղսավոր ու չնչին լինելու գիտակցումն է թույլ տալիս լսել Նրա խոսքը, պահել Նրա ճանապարհները եւ երկրային կյանքի խավարում աստվածային լույսը գտնել. *«Եվ արդ, Դու միայն Աստուած երկնաւոր՝ բարձրեալ, բարեգործ. Քո է զօրութիւն, Քո ներողութիւն, Քո բժշկութիւն, Քո առատութիւն, Քո են պարգեւք, Քո միայնոյ են ձիրք ձրի, Քո քաւութիւն, Քո պաշպանութիւն...»* (Ս. Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Բան ԺՁ, Ա):

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ - ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.
ՍԵՐՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՐՁ ԲԱԺԱՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 4

Ճակատագրով, ինչպես եւ ներաշխարհով ու մտածողությամբ իրար հարազատ այս երկու հոգիների առաջին հանդիպումը տեղի է ունեցել հեռակա, երբ 1920 թ. նոյեմբերին արտասահմանից վերադարձած Թեքեյանը ձեռնարկել էր Ռամկավար ազատական կուսակցության միացումը, ընտրվել կուսակցության նախագահ եւ խմբագրում էր կուսակցության օրգան «Ժողովրդի ձայնը» օրաթերթը: Սյուրմելյանը, կոտորածների պատճառով որբանալով, թափառել էր ռուսական մի շարք քաղաքներում, 1918-ին վերադարձել Կ. Պոլիս, կարճ ժամանակով ուսանել Արմաշի գյուղատնտեսական վարժարանում *(Սյուրմելյանի այս նախասիրությունը գալիս էր նրա մորեղբորից՝ Հարությունից, ով երկրագործություն էր ուսանել Եվրոպայում, սակայն թոքախտի պատճառով կիսատ էր թողել ուսումը եւ վերադարձել իր գերդաստան ու կնքել իր մահկանացուն, նա ունեցել է նաեւ գրական հակումներ)*, որը աշակերտների հետ մեկնել Հայաստան ու Կարսի անկումից եւ Հայաստան թուրքերի ներխուժումից հետո նորից վերադարձել Կ. Պոլիս, ապրել Պոլսի Էսայան վարժարանում տեղավորված որբանոցում եւ մի քանի ամիս սովորել Կեդրոնականում՝ ուսուցիչներ ունենալով Հ. Օշականին, Կ. Զարյանին, Գ. Գավաֆյանին եւ այլոց: Այս օրերին էլ Սյուրմելյանը Թեքեյանի հրատարակած թերթում տպագրում է իր երկու բանաստեղծությունները *(մինչ այդ Սյուրմելյանը Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթում տպագրել էր Հայաստանում իր անցկացրած ամիսների տպավորությունները)*, որոնց հեղինակի իսկությանը Թեքեյանը տեղյակ է լինում միայն հետո ու իմանում, որ իր սանն է:

Վահան Թեքեյանը հանձին Սյուրմելյանի տեսնում է ապագա մեր շնորհալի բանաստեղծներից մեկին եւ անգամ նմանություն՝ իր ու պատանի Սյուրմելյանի բանաստեղծական զգայնությունների միջեւ: Սյուրմելյանը Թեքեյանի «եղբայր» ու այնքան տենչված տղան էր՝ իրեն հայտնված մի փոքր մեծացած: Մյուս կողմից նա հավատացած էր, որ Սյուրմելյանն իր «կարօտ ազգին» ավելին պիտի տա, քան «մէկ քանի լաւագոյններ տուած են»: Եվ հենց այս համոզմամբ Թեքեյանի հարաբերությունները գնալով խորանում են՝ տեղիք տալով ջերմ ու սրտառուչ մի բարեկամության, որն աննախադեպ երեւույթ է մեր գրական-մշակութային կյանքում եւ որն ակունքվում էր երկու կարեւոր ելակետից. Թեքեյանը Սյուրմելյանի համար ամուր հենարան էր, խորհրդատու եւ հայրական ողջ հոգատարությամբ լցված անձ, ով, ի լրումն այդ ամենի, նաեւ մեծ բանաստեղծ էր, ուսուցիչ, ազգային գործիչ, իսկ Սյուրմելյանը Թեքեյանի համար այն անձն էր, ում մեջ նա տեսնում էր մարմնացումն իր ոչ միայն հոգեւոր, այլեւ տենչացված ֆիզիկական զավակի, որի նկատմամբ տածում էր «... հայր չեղած մարդու պահուած աղապատանք» ու «բոլորովին չանցած պատանութեան մը անուշ երազներ» *(Վահան Թէքէեանի նամակները Լեւոն Զաւէն Սիւրմէլեանին, Նիւ Եորք, 1950, էջ 21-22)*:

Սակայն, որքան էլ զարմանալի թվա, մամուլում արդեն տպված գործերի հեղինակ, Թեքեյանի ու Հակոբ Օշականի խրախուսանքներին արժանացած Սյուրմելյանը, ինչպես ինքն է վկայում, մտադիր չէր իր ուսումը շարունակել Կեդրոնականում եւ բոլորովին էլ հավակնություն չուներ բանաստեղծ դառնալու. «Ես կուզեի մեկնիլ Ամերիկա, երկրագործական գիտության տիրանալու՝ Հայաստանի համար: ... Ես բանաստեղծ չէի» *(«Սովետական գրականություն», Եր., 1980, թիվ 6, էջ 96)*: Չենք կարող չասել, որ իրականում Սյուրմելյանն իրոք օժտված էր բանաստեղծական շնորհով, բանաստեղծ էր իր էությամբ ու տաղանդով, բայց բանաստեղծ չէր իր նախասիրություններով ու նպատակներով:

Դաշնակից մեծ պետությունները քիչ-քիչ Թուրքիային էին զիջում Առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքով իրենց գրաված հողերը: Խուճապը հասնում է մինչեւ Պոլիս: Թեքեյանը Սյուրմելյանին հորդորում է չհեռանալ եւ շարունակել ուսումը: «Անտուն եւ անոթի որբ» Սյուրմելյանն ընկերների հավաքած դրամներով եւ Պոլսում գործող Հայ գյուղատնտեսական միության աջակցությամբ Ամերիկա մեկնող մի նավի նկուղի տոմսակ է գնում ու 1922-ի օգոստոսին հեռանում Պոլսից:

Ավելի ուշ՝ 1922 թ. հոկտեմբերին, Սյուրմելյանին գրած նամակում Թեքեյանը նշում է, որ ինչ լավ արեց, որ իրեն չլսեց, քանի որ ամեն բան դեպի «գէշն» է գնում, եւ փախչողներն ու ցրվողները գնալով շատանում են:

Անկեղծությամբ ու հոգատարությամբ լեցուն եւ հուզականությամբ թրթռուն բարեկամության մի նոր շրջան են թեւակոխում Թեքեյան-Սյուրմելյան հարաբերությունները՝ այս անգամ նամակագրության միջոցով:

Ամեն բան փոխադարձ էր. Թեքեյանն իր նամակներում ամենայն գորովով Սյուրմելյանին անվանում է «սիրելի տղաս», իր աղապատանքը հայտնում, որ պիտի տաքացնի Սյուրմելյանի «մրսող սիրտը», հավաստիացնում, որ ինքն էլ «իր ցուրտին մէջ» պետք ունի Սյուրմելյանի գորովին, Սյուրմելյանն էլ գրում է, որ Ամերիկայում ինքը ոչ մի մտերիմ չունի եւ իրեն համարում է կրկնակի որբացած, եւ որ Թեքեյանի նամակներն իրեն շատ են օգնում ճիշտ կողմնորոշվելու կյանքի հորձանուտում: Այս ընթացքում գրված երկուստեք նամակներն էլ աչքի են ընկնում ջերմությամբ ու անմնացորդ նվիրումով:

Բանաստեղծությունը՝ բանանաստեղծություն, գրական շնորհը՝ շնորհ, ամրակայող հայր-զավակ հարաբերությունները՝ երկուստեք բաղձալի, բայց Սյուրմելյանի համար գոյություն ուներ մի ուրիշ նպատակ, որի մասին նա երազել էր վաղուց եւ անելու էր ամեն ինչ՝ այն իրականացնելու համար. ստանալ երկրագործական հիմնավոր կրթություն ու մեկնել Հայաստան՝ այնտեղ կիրառելու իր գիտելիքները. ծառ տնկել հայրենի հողում ու նպաստել գյուղատնտեսության զարգացմանը: Իր նպատակին հասնելու համար Սյուրմելյանն ընդունվում է Կանզասի երկրագործական քոլեջ (հետագայում սովորել է նաեւ Նեբրասկալի եւ Կալիֆոռնիայի համալսարաններում):

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԻԱ ՄՈՆԹԵՍՈՐԻ
ԻՆՉՊԵՍ ԴԱՍԱՎԱՆԴԵԼ

Սկիզբը՝ թիվ 1

Մեկ այլ դասի ընթացքում ուսուցչի նպատակն էր երեխաներին բացատրել աղմուկի եւ ձայնի տարբերությունը: Նա սկսեց մի երկար պատմություն պատմել երեխաներին: Հանկարծ, նախապես որոշվածի համաձայն, ինչ-որ մեկն ուժեղ թակեց դասարանի դուռը: Ուսուցիչը խոսքն ընդմիջեց եւ բղավեց. «Ի՞նչ է սա, ի՞նչ պատահեց, ի՞նչ տեղի ունեցավ, երեխանե՛ր, դուք գիտե՞ք, թե ինչ արեց այդ մարդը դռանը: Ես չեմ կարող շարունակել իմ պատմությունը, չեմ հիշում: Ես ստիպված եմ վերջացնել այն՝ առանց ավարտելու: Դուք գիտեք, թե ինչ պատահեց, լսեցի՞ք, հասկացա՞ք, դա աղմուկն էր, աղմուկ: Ես կգերադասեի խաղալ այս փոքրիկ երեխայի հետ (վերցնում է մանդոլինան, որը դրել էր սեղանի ծածկոցի տակ): Այո՛, սիրելի՛ փոքրիկ, ես ցանկանում եմ խաղալ քեզ հետ»: Մի քանի աշակերտ բղավեցին. «Դա մադոլինա է»: Ուսուցիչը համառում է. «Ոչ՛, սա փոքրիկ երեխա է: Ես սիրում եմ այս երեխային: Ուզո՞ւմ եք, ես ձեզ ցույց տամ, որ սա երեխա է: Ապա լուռ նստեք: Ինձ թվում է՝ երեխան լալիս է, գուցե նա ցանկանում է խոսել, մայրիկ կամ հայրիկ կանչել»: Մտցնում է ձեռքը սեղանի տակ եւ դիպչում մանդոլինայի լարերին. «Դուք լսո՞ւմ եք երեխայի լացը. լսո՞ւմ եք, որ նա կանչում է»: Մի երեխա բացականչեց. «Դա մանդոլինա է, Դուք նվագում եք»: Այդ ժամանակ ուսուցիչը պատասխանեց. «Լռի՛ր, լսի՛ր՝ ինչ եմ պատրաստվում անել»: Նա հանեց մանդոլինան, սկսեց նվագել՝ ասելով. «Սա ձայն է»:

Ենթադրել, որ բացատրման այս եղանակով երեխան տարբերակեց ձայնն ու աղմուկը, ծիծաղելի է: Աշակերտն ավելի շուտ այն տպավորությունն ունի, որ ուսուցիչը ցանկանում է խաղալ իրենց հետ, եւ նա անմիտ է, քանի որ կորցրել է մտքի թելը՝ նախ աղմուկի պատճառով, իսկ հետո՝ մանդոլինան երեխայի հետ շփոթելով: Մեծ հավանականությամբ՝ ուսուցչի կերպարն ավելի մեծ տպավորություն է գործել նրանց վրա, քան թե այն առարկան, որի ուսուցումը դասի հիմնական նպատակն էր:

Իրականում դժվար խնդիր է ուսուցչից ակնկալել համապատասխան մեթոդներով դաս: Հիշում եմ՝ ընդհանուրի եւ մասնավորի բացատրությունից հետո ես կանչեցի իմ ուսուցիչներից մեկին, որպեսզի երկրաչափական պատկերների օգնությամբ սովորեցնի քառակուսին եւ եռանկյունին: Ուսուցչի խնդիրը պարզ է. փայտե քառակուսին ու եռանկյունին պետք է տեղավորի համապատասխան տախտակի դատարկ տեղերում: Նա պետք է իր մատերի շարժումներով ցույց տա առարկան՝ միաժամանակ ասելով. «Սա քառակուսի է: Սա եռանկյունի է»: Ուսուցիչը, ում ես կանչել էի, միանգամից աշակերտին տվեց քառակուսին՝ ասելով. «Սա կողմ է, սա նույնպես, եւս մեկ կողմ, նորից կողմ: Չորս կողմ ունի, հաշվի՛ր քո փոքրիկ մատներով եւ ասա՝ քանի կողմ ունի: Հաշվի՛ր նաեւ անկյունները, զգա դրանք քո փոքրիկ մատներով»: Ես ուղղեցի ուսուցչին՝ ասելով, որ այդ եղանակով նա չի ծանոթացնում պատկերներին, այլ տեղեկություն է տալիս պատկերի կողմերի, անկյունների եւ թվերի մասին, իսկ դասի նպատակը դա չէր: Ուսուցիչն առարկեց ինձ, որ դրանք իրականում նույնն են: Բայց միանգամայն այդպես չէ. դա երկրաչափական վերլուծություն եւ թվերի առարկայացում է: Կարելի է պատկերի մասին տեղեկություն տալ՝ առանց հաշվելու մինչեւ չորսը եւ հետեւաբար՝ առանց հաշվելու անկյուններն ու կողմերը: Կողմերն ու անկյուններն այդ պահին համարվում են վերացական, դրանք գոյություն չունեն, այն, ինչ այդ պահին կա, փայտի կտոր է՝ որոշակի պատկերի ձեւով: Ուսուցչի բարդ բացատրությունը ոչ միայն շփոթեցնում է երեխայի միտքը, այլեւ խառնում է կոնկրետի եւ վերացականի հեռավորությունը, առարկայի ձեւը եւ թիվը:

Շարունակությունը՝ էջ 8

ՄԱՐԻԱ ՄՈՆԹԵՍՈՐԻ ԻՆՉՊԵՍ ԴԱՍԱՎԱՆԴԵԼ

Սկիզբը՝ էջ 7

Ենթադրենք, ես եմ օրինակ բերում ուսուցչին, ճարտարապետը ձեզ ցույց է տվել գմբեթավոր շինություն, որի ձեւը ձեզ հետաքրքիր է: Նա 2 մեթոդով կարող է ձեզ ներկայացնել այդ առարկան. ձեր ուշադրությունը դարձնելով կամարի գեղեցկությանը, մասերի ներդաշնակությանը կամ պարզապես ձեզ շենքի ներս կհրավիրի եւ ցույց կտա ներսից բոլոր մանրամասները, որ դուք կարողանաք գնահատել շինության մասերի համամասնությունն ու ներդաշնակությունն այնպես, որ շինության մասին ձեր պատկերացումը հիմնվի նրա բոլոր մասերի ճանաչողության վրա: Նա կարող է ձեզ առաջարկել հաշվել պատուհանները, լայն ու նեղ քիվերը: Բայց նա կարող է առաջարկել ձեզ նաեւ շինության մանրակերտը եւ ցույց տալ չափագրման միջոցները, որոնք անհրաժեշտ են շենքի կառուցման համար: Առաջին դեպքում Դուք ձեր մտքում կպահեք գմբեթի ձեւը, երկրորդ դեպքում, ոչինչ չհասկանալով, կհեռանաք՝ մտածելով, որ ճարտարապետը խոսում էր ինժեների հետ, ոչ թե սովորական անցորդի, ում նպատակն էր ծանոթանալ՝ նրա մասին հստակ գիտելիքներով: Նույնն է, երբ մենք երեխային փոխանակ ասելու՝ «Սա քառակուսի է» եւ նրան տալու պատկերը, որ նա դիպչի եզրագծերին՝ ձեւի մասին գաղափար կազմելու համար, անցնում ենք երկրաչափական վերլուծության:

Իրականում մենք պետք է զգանք, որ առաջ ենք անցնում՝ երեխային սովորեցնելով մարմնի (քառակուսու) երկրաչափական պատկերը, միաժամանակ գաղափար տալով թվաբանության մասին, մենք չենք ընդունում, որ երեխան կրկնակի անզոր է՝ ընդունելու այդ պարզ ձեւը, ընդհակառակը, երեխայի համար տարբերություն չկա քառակուսու, պատուհանի ու սեղանի (ձեւերի) միջեւ, նա այդ ամենը տեսնում է առօրյա կյանքում: Նրա ուշադրությունը որոշակի ձեւի, պատկերի վրա հրավիրելու համար անհրաժեշտ է հստակեցնել առարկայի մասին նրա տպավորությունը եւ ամրագրել այն:

Դա նման է նրան, երբ մենք, ասենք, փնտրում ենք ինչ-որ մտացածին լճափ, հանկարծ նկարիչն ասում է. «Ի՞նչ հրաշալի է ափը՝ ժայռի տակ ստվերված»: Նրա խոսքերից տպավորված՝ մենք անգիտակցաբար պատկերացնում ենք

լճափը մեր մտքում. ասես միանգամից լուսավորվում ենք արեւի շողերով եւ ուրախանում այն պատճառով, որ հիմա մենք հստակ պատկերացնում ենք այն, ինչ մինչ այդ անորոշ էինք զգում:

Այդպես է նաեւ մեր պարտքը երեխայի նկատմամբ. տալ լույսի շողը, որպեսզի նա քայլի այդ ճանապարհով: Այս ամենը ես կարող եմ նմանեցնել մեկին, ով քայլում է հանգիստ, միայնակ, մտքերով տարված՝ ունակ իր ներքին կյանքն ազատ փոխելու: Հանկարծ հեռվից եկող զանգակների ձայնն արթնացնում է նրան, եւ այդ զարթոնքից նա զգում է ավելի ուժեղ, քան այն խաղաղության ու գեղեցկության մեջ, որ նա առաջ կար, բայց նաեւ գիտակցված: Կյանքը խթանելու համար այն պետք է ազատորեն զարգացնել, ընդարձակել. սա մանկավարժի առաջին խնդիրն է: Այս նուրբ խնդրին մեծ արվեստ է պետք՝ սահմանափակելով միջամտությունը. մենք չպետք է արթնացնենք հոգեկան որեւէ խռովություն, որն առաջ կբերի շեղում, այլ պետք է օգնենք երեխային, որ կյանք մտնելով՝ ապրի իր սեփական ուժերով: Այդ արվեստը պետք է ուղեկցվի գիտական մեթոդներով:

Ուսուցիչն այսպես պետք է շփվի իր աշակերտների հետ՝ «հոգին հոգու հետ»՝ ոգելով եւ արթնացնելով նրանց մեջ կյանքը. անտեսանելի ոգու նման նա պետք է տիրի յուրաքնչյուրի հոգուն, եւ նրա ամեն մի բառը կբավարարվի, ամեն մեկը պիտի զգա նրան իր կյանքում, ճանաչի նրան եւ լսի: Կգա մի օր, երբ տնօրենը զարմանքով կտեսնի, որ բոլոր երեխաները ջերմությամբ եւ մեղմությամբ հնազանդվում են ուսուցչին: Նրանք կնայեն ուսուցչի կողմը իբրեւ մեկի, ով նրանց կյանք է տվել եւ դեռ կսպասեն նոր կյանքի: Փորձաքննությունը ցույց տվեց այդ ամենը, եւ սա է այն գլխավոր զարմանքի պատճառը, որ ունենում են բոլորը, ովքեր մտնում են «Մանուկների տուն»: Այսպիսով՝ խմբային կարգապահությունն ստացվում է ինչ-որ մոգական ուժով: 2,5 - 6 տարեկան 50-60 երեխա բոլորը միասին եւ ամեն մեկն առանձին-առանձին գիտի՝ ինչպես հասնել կատարյալ խաղաղության, որ նրանց բացարձակ լռությունը թվա մի անապատ: Եվ եթե ուսուցիչը ցածր ձայնով ասի աշակերտին. «Վե՛ր կաց, ոտնաթաթերի վրա մի քանի անգամ պտտվի՛ր սենյակում եւ լուռ վերադարձի՛ր քո տեղը», բոլորը միասին, մեկ մարդու պես, վեր կկենան եւ կկատարեն ուսուցչի հանձնարարությունը՝ նվազագույն աղմուկով: Ուսուցիչն ասում է յուրաքանչյուր երեխայի, եւ նրանցից ամեն մեկն ակնկալում է նրանից միջամտություն, որ ստանա ինչ-որ խորհուրդ եւ ներքին երջանկություն: Այդպես գիտակցելով՝ նա առաջ է գնում առանց կանխամտածված դիտավորության՝ իր հետազոտության մեջ հետեւելով իր իսկ հրահանգներին:

Կարգապահության այս եղանակը նման է խմբավարի աշխատանքին: Խմբավարը պետք է պատրաստի իր սաներին մեկ առ մեկ, որպեսզի իրենց խմբային աշխատանքում նվագեն համաչափ ներդաշնակությամբ: Յուրաքանչյուր արվեստագետ պետք է կատարելագործվի իբրեւ անհատ, մինչեւ պատրաստ լինի հետեւելու մաեստրոյի լուռ հրամաններին:

Այսպիսով՝ մենք գտնում ենք, որ առավել կարգապահ են հասարակության այն անդամները, ովքեր լավագույնս պատրաստված են, կատարելագործված, բայց այդ պատրաստվածությունն ու կատարելագործումը պետք է արտահայտվի մարդկանց հետ շփման միջոցով: Խմբային, հավաքական կատարելություն չի կարող լինել ստիպողական համերաշխությամբ: Մինչ օրս մենք տիրել ենք երեխաներին ուժով, արտաքին օրենքների ազդեցությամբ, փոխանակ նվաճելու երեխայի ներքինը: Բայց եթե մենք հեռու վանենք մեզանից արհեստականությունը, որով ուղեկցվում ենք, եւ բռնությունը, որի միջոցով փորձում ենք նրանց դաստիարակել, նրանք իրենք իրենց կբացահայտեն ողջ ճշմարտությունը՝ իրենց բնության մասին:

Նրանց հեզությունն այնքան բացարձակ է, այնքան քաղցր, որ մենք նրանցով ընդունում ենք ողջ մարդկության մանկությունը, որն անփոփոխ է մնում բոլոր փոփոխվող ժամանակներում, ամեն անարդարության մեջ, եւ երեխայի սերը դեպի կրթությունը գերազանցում է բոլոր այլ «սերերը» ու ստիպում մտածել, որ ճշմարիտ մարդկությունը պետք է իրականացնել այն շրջանակներում, որը կդրդի մարդկանց մտքի հերթական նվաճումների՝ վերացնելով դարեդար փոխացնվող ստրկության յուրաքանչյուր տեսակ:

Անգլերենից թարգմանությունը՝
Լիլիթ ՀԱԿՈԲՅԱՆԻ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՁՈՐԱՎԱՐ

Սկիզբը՝ էջ 5

Բանավոր ավանդության մեջ սիրահար զույգերի կողմից սբ Սարգսին ուղղված հաճախակի հնչող աղերսական բանաձեւն է՝

Մուրազատո՛ւ սուրբ Սարգիս,
Դու հասնիս (տարբերակ՝ հասուս) մըր էրկուսիս:

Երկտողը, որով սիրահարները խնդրում են իրենց սիրո փափագը կատարել կամ պարզապես իրենց միմյաց հասցնել, ընտանիք կազմելու համար է:

Սիրահարներին միմյանց հասցնելու այս բաղձանքն աղերսվում է սբ Սարգսից բանավոր ավանդության մեջ պատճառակցված (էթնոլոգիական) զրույցում: Ըստ այդ զրույցի՝ թշնամի թագավորը զորքով ելնում է ուռոմի (հունաց) թագավորի վրա եւ վերջինիս նեղը գցում: Հույների թագավորը հայոց թագավորից օգնություն է խնդրում: Հայերից Սարգիս անունով մեկն իր զորքով հասնում է օգնության եւ մեծ քաջագործությունների գնով ազատում հույներին: Հույների թագավորը, վախենալով Սարգսի զորությունից, պատվիրում է վերջինիս զորքից կենդանի մնացած քառասուն զինվորներից յուրաքանչյուրին տալ մի աղջիկ, նրանց գինովացնել եւ գիշերն այդ աղջիկների ձեռքով սպանել բոլորին: Կեսգիշերին 39 աղջիկ սպանում է 39 զինվորի՝ բացառությամբ Սարգսին բաժին ընկած աղջկա: Վերջինս, ափսոսալով զորավարին, կողքին նստած լաց է լինում. արցունքներն ընկնում են քնած Սարգսի դեմքին, նա արթնանում է եւ զարմացած հարցնում լացի պատճառը: Աղջիկը պատմում է եղելությունը եւ շտապեցնում Սարգսին միասին փախչել: Սարգիսն ու աղջիկը ծնկի են գալիս ու Աստված կանչում: Աստծո զորությամբ բուք ու քամի է բարձրանում, Սարգիսն աղջկան առնում է իր բոզ ձիու գավակը, ձիով քաղաքի պարսպից դուրս թռչում ու միասին գալիս Հայաստան աշխարհը (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 365-366):

Սրբի կողմից սիրահարներին իրենց մուրազին հասցնելու գործառույթը ցայտուն արտահայտություն է գտել «Աշուղ Ղարիբ» սիրավեպում, որի թիֆլիսյան տարբերակը 1885-ին հրատարակել էր Գեւորգ Տեր-Աղեքսանդրյանը՝ իր «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» ժողովածուում: Ըստ այդ տարբերակի՝ աղքատ Աշուղ Ղարիբը սիրում է մի հարուստ աղջկա՝ Շահսանամին: Վերջինս եւս սիրում է նրան, բայց հայրը հավանություն չի տալիս նրանց ամուսնությանը եւ մտադրվում է աղջկան ուրիշին տալ: Աշուղ Ղարիբը փող դատելու եւ հարստանալու նպատակով գնում է օտարություն: Հրաժեշտի ժամանակ խնդրում է աղջկան, որ յոթ տարի հետո, եթե չվերադառնա, թող ամուսնանա ուրիշի հետ: Յոթ տարի անց՝ վերադարձին, նա ուշանում է, վերջին օրվան հասնելու համար մի քանի օրվա ճանապարհ դեռեւս ուներ անցնելու: Հուսահատված նա սբ Սարգսին օգնության է կանչում: Վերջինս իսկույն հայտնվում է, Աշուղ Ղարիբին առնում ձիու գավակը եւ մի ակնթարթում հասցնում հայրենի քաղաք, եւ աշուղն ամուսնանում է Շահսանամի հետ:

Շարունակելի
Աննա ՊՈՂՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 30.1.2017թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ